



ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ Ս. ԱԹՈՒՈՅՆ
 ՆՈՐԸՆՏԻՐ ՊԱՏԻԱՐԻ
 ԱՄԵՆԱՊԱՏԻՒՄ Տ. ՆՈՒՐՅԱՆ ԱՐԻ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

Միմև

ԱՄՍԱԳԻՐ

ԿՐՕՆԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆ - ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐԻՈՒԹԵԱՆ

2013



ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ Ս. ԱԹՈՌՈՅՆ
ՆՈՐԸՆՏԻՐ ՊԱՏՐԻԱՐԻ
ԱՄԵՆԱՊԱՏԻԻ Տ. ՆՈՒՐՀԱՆ ԱՐԹ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

ՓՈԽԱՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆԻ

«Տէր Աստուած իմ փառաւոր արարից գթեզ, օրհնեցից զանուն քո, զի արարեր սքանչելի իրս ...» (Եսայի ԻԵ:1)

1971 թուին էր երբ առաջին անգամ կատարեցի իմ ուխտս այս սուրբ Սեղանին առջեւ, ծառայելու բոլորով սրտիւ այս Սրբազան Աթոռին. եւ 1998 թուին, Լուսարարապետ ընտրութեանս առթիւ, խղճմտանքիս խորանին առջեւ սրտանց կատարեցի իմ ուխտը, Առաքեալին հետ ըսելով. «Ես կապեալ հոգւով երթամ յերուսաղէմ»: Ու այդ վայրկեանէն իսկ հոգիս աւելի կապուեցաւ այս Հաստատութեան իտէպին: Սակայն բախտորոշ այն օրը երբ անարժանս ընտրուեցաւ իբր 97-րդ Պատրիարքը այս սուրբ եւ պատմական Աթոռին, իմ ուխտը եղաւ ամբողջ եւ անսակարկ էութեամբ նուիրուիլ այս դարաւոր եւ փառաւոր Հաստատութեան բարի ու շինիչ սկզբունքներուն:

Եւ սակայն հիմա, երբ կը ստանամ Հովուական այս ցուպը, կարծէք կը ստանամ ձեռքերէն անոնց՝ որոնք ամբողջ դարեր Աստուծոյ հոգիով առաջնորդեցին այս սրբութիւններուն հովանիին ներքեւ ապրած սիրտերը, ու սարսուռ մը կ'անցնի ամբողջ էութենէս: Երջանիկ հոյը այդ քաջարի հովիւներուն, առաջինէն մինչեւ իմ արժանաւոր հոգեւոր Հայրս եւ Ուսուցիչս, Երջանկայիչատակ Եղիշէ Տ. Արք. Տէրտէրեան, որուն ստուերը կը զգամ թէ առաջնորդած է զիս հոս, թող բոլորն ալ իրենց յաւիտենական Հանգիստէն օրհնեն զիս, առաջնորդեն եւ ամբապնդեն իմ տկար քայլերս: Ըսի թէ արդէն կատարած էի ուխտս, բայց այսօր, մինչ կ'արտասանէի Պատրիարքական ուխտս, որ զիս ցկեանս կը կապէ այս ծանր, սակայն միաժամանակ քաղցր լուծին, յիշեցի Ս. Գրքին մէջ քանիցս յիշուած այն բացառիկ Ուխտը, «Ուխտն զոր երզուաւ Աստուած հարցն մերոց», Ուխտ մը զոր Հայր Աստուած կատարած էր այս նոյն բարձունքին՝ Սիոնի Բարձունքին վրայ մեր երանելի ու մեծ նախահայրերուն հետ, պահպանելու իր ժողովուրդն ու անոր ապագան:

Արդարեւ, առանց այսպիսի աստուածային խոստումի մը առթած արիութեան, անկարելի պիտի ըլլար մեր քաջարի նախնիքներուն տոկալու մեր պատմութեան անողոք ճակատագրին ու կարենալ դուրս բերելու մեր ազգային կեանքը անասելի փորձութիւններու եւ դառնութիւններու առապարներէն: Սակայն չմոռնանք սիրելի Հայորդիներ, եթէ Աստուծոյ ուխտն է փրկել մեզ, միւս կողմէն ալ յիշենք որ աստուածային այս ուխտը կ'իրականանայ միայն ու միայն մարդկային միջոցներով, մե՛ր միջոցներով, որովհետեւ Մարդը ի՛նքն իսկ է Աստուծոյ ծրագիրներուն գործիքը: Այն ծառայութիւնը, որ ամենայն յօժարութեամբ կը նուիրուի բարի ու վեհ նպատակի մը, աստուածային ուխտառութիւն մըն է, որ Առաքեալին անսուտ խօսքին համաձայն, մարդը գործակից կ'ընէ «ընդ Աստուծոյ»:

Եթէ մէկ կողմէն չափազանց ուժեղ է անձիս տկարութեան մասին իմ ունեցած համոզումս, սակայն միւս կողմէն այսօր պատրաստակամութիւն կը յայտնեմ խիզախելու միակ այն պատճառով, որ կը հաւատամ թէ այս նուիրական յարկէն ներս դարերէ ի վեր իրականացած ու ապրող գաղափարն ու գործը պարզապէս հետեւանքն են մարդոց ընդ Աստուծոյ ուխտակցութեան հրաշալի արդիւնքին. մարդիկ՝ որոնք Յոյսի եւ Սիրոյ գաղափարականներէն տոգորուած եւ առինքնուած, մօտ ամբողջ տասնեւութ դարեր եկած են խառնելու իրենց հաւատքի սէրը իրենց ճիգի քրտինքին:

Սիրելի Միաբանակից եղբայրներ ի Քրիստոս, ես այսօր եկած եմ անգամ մը եւս այս Սրբազան Հաստատութեան դարաւոր ուխտին խառնելու իմ ՌԻՆՏԸ, իմ անզօր Հոգիիս ԻՂՁՆ ու ՅՕԺԱՐՈՒԹԻՒՆԸ, մի միայն այն վստահութեամբ թէ իմ հետս ուխտակից ունիմ ձեզ բոլորդ, կամովին եւ զիտակցութեամբ ծառայելու Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ, Հայ Ժողովուրդին եւ նամանաւանդ նուիրական այս Սուրբ Աթոռին պատուաբեր կերպով: Թող միացնենք մեր ջանքերը, որպէսզի ժամանակին մէջ որ կ'ապրինք, մենք եւս կարենանք իրագործել «Ուխտն զոր երդուաւ Աստուած Հարցն մերոց», շարունակելու այն ինչ որ մեր երանելի նախնիքները՝ սկսած էին ու մենք պարտինք պատիւով շարունակել:

Եւ որքան սրտագրաւ կը հնչէ մեր վանական եղբայրութիւնը ներկայացնող բառերը կամ անունները. «Ուխտ Միաբանական» ու անոր կողքին՝ «Զինուորեալ Միաբանութիւն», որոնք կ'արտացոլացնեն մեր լոկ «Ծառայականներ» ըլլալու կոչումը, թէ ի՞նչ բանի համար կանչուած ենք մենք: Եթէ մենք իրա՛ւ զինուորներ ենք, նախ պարտինք արդարացնել մեր կոչումն ու ապա մեր վրայ դրուած յոյսերը: Եւ «ծառայութիւն» բառին լաւագոյն բացատրութիւնը կու տայ Հնդիկ մտածող՝ Ռապինտրանաթ Թակոր, որ կ'ըսէ. «Քնացայ եւ երազեցի թէ կեանքը հաճոյք էր. արթնցայ եւ տեսայ թէ կեանքը ծառայութիւն էր: Ծառայեցի եւ այն ատեն միայն հասկցայ թէ կեանքը իրաւ հաճոյք էր»: Զմոռնանք սիրելի Միաբանակից եղբայրներ, որ մենք բոլորս ծառաներն ենք մեր Երկնաւոր Հօր, եւ Անոր շնորհիւ՝ ծառաները մեր սիրեցեալ Հայ Ժողովուրդին, որոնց գերագոյն շահերուն առաջ պարտին տեղի տալ մեր անձնական, մեր Ես-ին շահերը, եւ մեր ոյժերը կեղերնացնենք միմիայն այս Սրբազան Հաստատութեան բարեգարգման ու պայծառութեան:

Այս պահուս պիտի ուզէի երախտագիտական իմ զգացումները յայտնել նուիրապետական մեր Աթոռներուն, ազգիս Վեհափառ Հայրապետ՝ Տ. Տ. Գարեգին Բ. Կաթողիկոսին, Մեծի Տանն Կիլիկիոյ Հայրապետ՝ Տ. Տ. Արամ Ա. Կաթողիկոսին, որոնք իրենց ներկայացուցիչներով, յանձինս՝ Գերշ. Նաթան Արք.ի եւ Վահան Եպս.ի, Անթիլիասէն՝ Գերշ. Տ. Վարուժան եւ Սեպուհ Արքեպիսկոպոսներու, եւ Կ. Պոլսոյ Պատրիարքական Փոխանորդ՝ Տ. Արամ Արքեպիսկոպոսին, իմ օժակից հոգեւոր եղբայրներուս՝ Գերշ. Վիզէն եւ Սաժակ Սրբազաններուն:

Շնորհակալութեան յատուկ խօսք Ս. Քաղաքի Քոյր Եկեղեցիներու Հոգեւոր պետերուն, ինչպէս նաեւ Գիւանագիտական Մարմիններու ներկայացուցիչներուն, եւ ձեզի՛ սիրեցեալ զաւակներ Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ. աղօթեցէ՛ք որ Յաւիտենական Քահանայապետը՝ Քրիստոս, մեր սիրեցեալ ազգին պարգեւէ՛ Սէ՛ր եւ ՄԻՈՒԹԻՒՆ յամերամ ժամանակօք, Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Հաստատութիւն, մեր պանծալի Աթոռին՝ առաւել պայծառութիւն, եւ Սրբոյ Ուխտիս Միաբանութեան՝ իմաստութիւն, համերաշխութիւն եւ անսակարկ նուիրուածութիւն: Հայր Աստուած միշտ հաւատարիմ եղած է իր խոստումին, մենք եւս հաւատարիմ մնանք մեր ուխտերուն մէջ, ու մեր ընթացքովն ու վարքովը փառաւորենք կամքը Ամենակալին Աստուծոյ, որ է օրհնեալ յաւիտեանս. Ամէն:

Նուրհան Արք. Մանուկեան
Հայ Պատրիարք Երուսաղէմի

**ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՐԲՈՅ ԱԹՈՌՈՅՆ
ԵՐՈՒՍԱՂԷՄԻ**

Ա. Կազմութիւն Պատրիարքական Թեկնածուներու Հնգանուն Ցանկին

23 Յունուար 2013ին, կէսօրէ վերջ ժամը 4:30ին, Միաբանական Ընդհ. Ժողովը ի նիստ գումարուեցաւ Պատրիարքարանի Դահլիճը, նախագահութեամբ՝ Պատրիարքական Տեղապահ՝ Գերշ. Տ. Արիս Արք. Շիրվանեանի, կազմելու համար Պատրիարքական ընտրելիներու հնգանուն ցանկը: Ներկայ էին Երուսաղէմէն եւ արտասահման ծառայող Սրբոց Յակոբեանց Ուխտին միաբաններէն 33 անդամներ:

Օրակարգի գործադրութեանց անցնելէ առաջ, կարդացուեցաւ Սրբոց Յակոբեանց Միաբանական Ուխտի Կանոնագրին մի քանի յօդուածներ որոնք առնչութիւն ունէին Պատրիարքական ընտրութեան հետ: Կանոնագրի ընթերցումէն վերջ, ձեռնարկուեցաւ հնգանուն ցանկի պատրաստութեան եւ տուաւ հետեւեալ արդիւնքը:

Գերշ. Տ. Արիս Արք. Շիրվանեան	16 քուէ
Գերշ. Տ. Նուրհան Արք. Մանուկեան	21 քուէ
Գերշ. Տ. Տաթև Արք. Ղարիպեան	18 քուէ
Գերշ. Տ. Սեւան Արք. Ղարիպեան	15 քուէ
Գերշ. Տ. Գիսակ Արք. Մուրատեան	15 քուէ

որոնք կազմեցին պատրիարքական ընտրելեաց հնգանուն ցանկը:

Բ. Ընտրութիւն Պատրիարքի

Յաջորդ օրը, 24 Յունուար 2013-ին, առաւօտեան ժամը 10-ին, կրկին գումարուեցաւ Միաբանական Ընդհանուր Ժողովը՝ ընտրելու համար հնգանուն ցանկէն Ս. Աթոռոյ Գահակալը:

Միաբանական Ընդհանուր Ժողովի նիստը բացաւ Պատրիարքական Տեղապահ՝ Գերշ. Տ. Արիս Արք. Շիրվանեան: Օրակարգի վրայ նիւթն էր՝ Հայ Երուսաղէմի Պատրիարքութեան արժանաւոր գահակալի ընտրութիւնը:

Նախքան ընտրական գործողութեանց սկսիլը, Տեղապահ Սրբազան Հայրը ,հոգոցս արտասանեց նախորդ Պատրիարքի՝ Երջանկայիշատակ Տ. Թորգոմ Արք. Մանուկեան Պատրիարքի հոգիին ի հանգիստ: Ապա ձեռնարկուեցաւ ատենական գործողութեանց: Նախքան քուէարկութեան անցնիլը, պատրիարքական ընտրելեաց հնգանուն ցանկէն երեքը հրաժարեցան իրենց թեկնածութենէն: Այսպիսով ընտրութեան թեկնածուներու ցանկը իջաւ երկուքի յանձինս՝ Գերշ. Տ. Արիս Արք. Շիրվանեանի եւ Գերշ. Տ. Նուրհան Արք. Մանուկեանի: Կատարուեցաւ զաղտնի քուէարկութիւն Ժողովին ներկայ եղող 33 միաբան ըտրողներու կողմէն, եւ քուէներու բացարձակ մեծամասնութեամբ Սուրբ Աթոռոյ Լուսարարապետ՝ Գեր. Տ. Նուրհան Արք. Մանուկեան ըտրուեցաւ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՍՐԲՈՅ ՅԱԿՈԲԵԱՆՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԱԹՈՌՈՅՆ:

Գերշ. Տ. Արիս Արք. Շիրվանեան	15 քուէ
Գերշ. Տ. Նուրիան Արք. Մանուկեան	17 քուէ
Սպիտակ	1 քուէ

Ապա Ատենապետ Սրբազան Հայրը յայտնեց Նորընտիր Պատրիարքին Ընդ. Ժողովի Դիւանին եւ Սրբոց Յակոբեանց Միաբանական Ուխտին կողմէ շնորհաւորութիւնները եւ բարեմաղթութիւնները ու հրաւիրեց Նորընտիր Պատրիարքը ընելու իր սրտի խօսքը Ժողովական միաբաններուն:

Նորընտիր Պատրիարքը իր շնորհակալական խօսքն ըրաւ միաբան հայրերուն, հուսկ ապա երգուեցաւ «Միոնի» Օրհներգը: Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարի գանգակները ղօղանջեցին ընտրութեան լուրը: Միաբան հայրեր՝ շնորհաւորեցին նորընտիր Պատրիարքը ու թափօր կազմելով առաջնորդուեցան դէպի Սրբոց Յակոբեանց Մայր Տաճար: Գլխադիրի մատրան առաջ, նորընտիր Պատրիարքը կատարեց իր ուխտը եւ տուաւ իր առաջին Օրհնութիւնն ու պատգամը որպէս նորընտիր Պատրիարք յաջօ սաղիմահայ գաղութին ու դպրոցական սաներուն:

Նորընտիր Պատրիարքի օրհնութենէն ու պատգամէն վերջ, Միաբանութիւն եւ Ժողովուրդ բարձրացան Պատրիարքարան, շնորհաւորելու նորընտիր Պատրիարքը:

Պատրիարքական ընտրութեան արդիւնքը յատուկ նամակով հաղորդուեցաւ Յորդանանի Հաշիմական Թագաւորութեան, Իսրայէլի եւ Պաղեստինեան պետութեանց եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Ամենայն Հայոց Հայրապետութեան:

Այս առիթով, նաեւ դիմում յղուեցաւ երեք Պետութիւններուն Պատրիարքական ընտրութեան արդիւնքը յայտնելով եւ խնդրելով պաշտօնական ճանաչումը նորընտիր Պատրիարքին:





Ի Պատրիարքարան Գումարուած Միաբանական Ընդի. Ժողովէն տեսարան մը:



Միաբանական Ընդի. Ժողովի Դիւանը



Նորընտիր Պատրիարք՝ Նորին Ամենապատուութիւն Տ. Նուրիան Արք. Մանուկեան



Յետ ընտրութեան գոհարանական աղօթք:



Յետ ընտրութեան թափօր դէպի Սրբոց Յակոբեանց Տաճար:



Ուխտ Գլխադրի Խորանին առաջ:



Օրհնութեան խօսք Նորընտիր Պատրիարք Սրբազան Հօր
Սրբոց Յակոբեանց Տաճարին մէջ:

ՇՆՈՐՀԱԻՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳՐԵՐ ՆՈՐԸՆՏԻՐ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԱՌԹԻԻ

Գերշ. Տ. Նուրիան Արք. Մանուկեանի Պատրիարք ընտրութեան առթիւ հասած են բազմաթիւ շնորհաւորական նամակներ, որոնց բոլորին մէջ առկայ է անսահման ուրախութեան արտայայտութիւնը ընտրութեան արդիւնքին համար:

Սրբոց Յակոբեանց Առաքելական Ուխտը կը յայտնէ իր սրտագին շնորհակալութիւնը, իր Պետին՝ Նորընտիր Պատրիարքին նկատմամբ ցոյց տրուած բարեմաղթութեանց համար:

Ներքելը պիտի ներկայացնենք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի՝ Ամենայն Հայոց Հայրապետ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ.ի եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Հայրապետ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա.ի շնորհաւորական նամակները ուղղուած Նորընտիր Պատրիարքին:

29 Յունուար 2013

Թիւ 121

*Ամենապատիւ Տ. Նուրիան Արք. Մանուկեան
Երուսաղէմի Հայոց Պատրիարք
Երուսաղէմ, Իսրայէլ*

*Ամենապատիւ Պատրիարք Սրբազան,
Հայրապետական օրհնութեամբ մեր շնորհաւորանքներն ենք բերում Ձերոյ
Ամենապատուութեանը՝ Երուսաղէմի Հայոց Պատրիարք ընտրուելու առիթով:*

Փառք Ամենակալին, որ Երուսաղէմի Հայոց Պատրիարքութիւնը ուխտեալ եկեղեցականաց հաւատարիմ ծառայութեամբ դարեր ի վեր արդիւնազարդում է իր սրբազան առաքելութիւնը Տէրունակոյն սուրբ վայրերում: Մեր հոգու հայցն է, որ Տիրոջ օրհնութեան ներքոյ Սրբոց Յակոբեանց զինուորեալ միաբանութիւնը Ձեր զլխաւորութեամբ շարունակի տէրունապատուէր սպասաւորութիւնն ու նախանձախնդիր պահպանութիւնը սուրբ տեղեաց մեր նուիրական սրբավայրերի:

Հայոց հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից աղօթք ենք վերառարում առ Բարձրեալն Աստուած, որ միշտ աջակից լինի Ձեզ, շնորհի քաջառողջութիւն, արգասալի իրագործումներ ու մշտանորոգ յաջողութիւններ եւ առաւել զօրացնի երուսաղէմի Հայոց Պատրիարքութիւնը՝ ի փառս Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու, ի մխիթարութիւն համայն հաւատաւոր մեր ժողովուրդի:

*Միրոյ ողջունիւ ի Քրիստոս՝
Գարեգին Բ
Կաթողիկոս Ամենայն Հայոց*

29 Յունուար 2013

Թիւ 11/13

Ամենապատիւ
Տ. Նուրիան Արք. Մանուկեան
Պատրիարք Հայոց Երուսաղէմի
Երուսաղէմ

Միրեցեալ Եղբայր ի Քրիստոս,

Հոգեկան անհուն ուրախութեամբ իմացանք Ձեր ընտրութիւնը, որպէս 97-րդ Պատրիարք Երուսաղէմի Առաքելական Սուրբ Աթոռոյ: Արդարեւ, Մենք Ձեզ մօտէն ճանչցած ենք, որպէս դասընկեր Անթիլիասի Դպրեվանքէն ներս, եւ հետեւած Ձեր վանական թէթեմական ծառայութեան, ինչպէս նաեւ Ձեր մտաւորական աշխատանքներուն: Հետեւաբար, վստահ ենք որ Ձեր ձեռք ձգած հարուստ փորձառութեամբ եւ Ձեր անձնական արժանիքներով վերանորոգ նուիրումով պիտի լծուիք Ձեր առջեւ բացուող նոր առաքելութեան:

Գիտենք, որ Ձեզ շրջապատող ներկայ պայմանները լեցուն են այլազան ու բազմազան դժուարութիւններով: Ձեր խոր հաւատքով, ամուր կամքով ու անանձնական նուիրումով վստահաբար պիտի պաշտպանէք Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան դարաւոր իրաւունքները: Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը ու նաեւ Մենք անձնապէս միշտ պիտի մնանք Ձերդ Ամենապատուութեան ու Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան կողքին՝ զօրավիզ ու աջակից Ձեր աշխատանքներուն: Ինչպէս գիտէք, միշտ սերտ գործակցութիւն գոյութիւն ունեցած է Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան եւ Երուսաղէմի Պատրիարքութեան միջեւ: Վստահ ենք որ Ձեր պատրիարքական ծառայութեան շրջանին մեր սուրբ աթոռներուն միջեւ եղբայրական գործակցութիւնը առաւել թափով պիտի շարունակուի:

Կաղօթենք առ Բարձրեալն Աստուած որ Ձերդ Ամենապատուութեան պարզեւէ եկեղեցաշէն իրագործումներով հարուստ երկար գահակալութիւն, եւ անսասան պահէ Երուսաղէմի Առաքելական Սուրբ Աթոռը իր զինուորեալ միաբանութեամբ:

Եղբայրական ջերմ սիրով,
Աղօթակից
Արամ Ա. Կաթողիկոս
Մեծի Տանն Կիլիկիոյ

Ներքեւ կը ներկայացնենք մնացեալ Շնորհաւորական նամակներու ցանկը:

ԵՐՈՒՍԱՂԵՄԷՆ

ՀՀ Պատույ Հիւպատոս՝ Յարգարժան Տիար Յուլակ Մոմճեան, Երուսաղէմ:

ԻՍՐԱՅԷԼԷՆ

Պետախ-Տիկվայի Իսրայէլահայերու «Նայիրի» Միութիւն, Տիար Արտյոմ Չերնամորեան, Իսրայէլ:

ՅՈՐԴԱՆԱՆԷՆ

Պատրիարքական Փոխանորդ Ամանահայոց եւ Շրջակայից եւ Նախագահ Ամանահայ Ազգային Տեղ. Խորհուրդի՝ Գերշ. Տ. Վահան Արք. Թօփալեան, Ամման: Տէր եւ Տիկին Գեորգ եւ Մարի Տաբուեաններ, Ամման:

ԵԳԻՊՏՈՍԷՆ

ՀՀ Դեսպան յԻսրայէլ՝ Յարգարծան Տիար Արմէն Մելքոնեան, Գահիրէ:

ԼԻԲԱՆԱՆԷՆ

Մեծի Տանն Կիլիկիոյ Վեհափառ Հայրապետ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս, Անթիլիաս: Պատրիարք Կաթողիկէ Հայոց՝ Ամենապատիւ Տ. Ներսէս Պետրոս ԺԹ, Լիբանան:

ԿԻՊՐՈՍԷՆ

Կաթողիկոսական Փոխանորդ Կիպրոսի Հայոց Թեմին՝ Գերշ. Տ. Վարուժան Արք. Հերկելեան, Նիկոսիա: Կիպրահայ Համայնքի Պետական Ներկայացուցիչ՝ Յարգարծան Տիար Վարդգէս Մահտեսեան:

ՀԱՅԱՍՏԱՆԷՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Հայոց, Մայր Աթոռ Ս. Էջմիածին: Հայաստանի Հանրապետութեան Նախագահ՝ Վսեմաշուք Տիար Սերժ Սարգսեան, Երեւան: Հայաստանի Հանրապետութեան Ազգային Ժողովի Նախագահ Տիար Յովիկ Աբրահամեան, Երեւան: ՀՀ Արտաքին Գործոց Նախարար՝ Տիար Էդվարդ Նալբանդեան, Երեւան: ՀՀ Սփիւռքի Նախարար՝ Ազնուփայլ Տիկին Հրանուշ Յակոբեան, Երեւան: Առաջնորդ Արմավիրի Թեմին՝ Գերշ. Տ. Սիոն Եպս. Աղամեան, Արմավիր: Ռամկավար Ազատական Կուսակցութեան Կեդրոնական Վարչութեան Ատենապետ Տիար Մայր Խարապեան, Երեւան:

ՎՐԱՍՏԱՆԷՆ

Առաջնորդ Վիրահայոց Թեմին՝ Գերշ. Տ. Վազգէն Եպս. Միրզախանեան: Ջավախքի Ընդհանուր Առաջնորդական Փոխանորդ Հոգւ. Տ. Բաբգէն Աբղ. Սալբիյան:

ԹՈՒՐԳԻԱՅԷՆ

Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքութեան Պատրիարքական Ընդհ. Փոխանորդ՝ Բարձրաշնորհ Տ. Արամ Արք. Աթէշեան, Իսթանպուլ: Archbishop of Constantinople-New Rome and Ecumenical Patriarch His Beatitude Bartholomew, Constantinople. President of Religious Affairs His Excellency Prof. Dr. Mehmet Gormez, Ankara:

ՎԱՏԻԿԱՆԷՆ

Pope, Bishop of Rome and leader of the Catholic Church His Holiness Francis, Vatican:

ՊՈՒԼՎԱՐԻԱՅԷՆ

Պուլկարիոյ Հայոց Թեմի Առաջնորդական Տեղապահ Հոգւ. Տ. Աբգար Վրդ. Յովհակիմեան, Սոֆիա:

ՄԵԾՆ ԲՐԻՏԱՆԻԱՅԷՆ

Առաջնորդ Հայոց Մեծն Բրիտանիոյ եւ Իռլանդիայի Թեմին՝ Գերշ. Տ. Վահան Եպս. Յովհաննէսեան, Լոնտոն:

ՖՐԱՆՍԱՅԷՆ

Առաջնորդ Ֆրանսայի Թեմին եւ Հայրապետական Պատուիրակ Արեւմտեան Եւրոպայի՝ Գերշ. Տ. Նորվան Արք. Ջաքարեան:

ԳԵՐՄԱՆԻԱՅԷՆ

Առաջնորդ Գերմանիոյ Թեմին՝ Գերշ. Տ. Գարեգին Արք. Պեքճեան, Քէլն:

ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԷՆ

Առաջնորդ Հայոց Ամերիկայի Արեւելեան Թեմի՝ Գերշ. Տ. Խաժակ Արք. Պարսամեան, Նիւ Եորք: Ամերիկայի Արեւմտեան Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արք.

Տէրտէրեան, Պրրպէնք: The Episcopal Diocese of New York, Rt. Rev. Andrew M L Dietsche, Sixteenth Bishop of New York, New York. Գերշ. Ս. Եղիշէ Արք. Կիզիբեան, Միացեալ Նահանգներ: Առաջնորդութիւն Հայոց Ամերիկայի Արեւմտեան Թեմի Գերշ. Ս. Վաչէ Արք. Յովսէփեան, Միացեալ Նահանգներ: Հայկական Ընդհանուր Միութեան Նախագահ՝ Տիար Պերճ Սեդրակեան: Արժ. Ս. Արտէն Ա. Քհնյ. Աշճեան, Նիւ Եորք: Արժ. Ս. Զաւէն Աւագ Քահանայ Արզումանեան, Գալիֆորնիա: Արժ. Ս. Սիփան Աւագ Քահանայ Միսեսեան, Պրրպէնք: Արժ. Ս. Վազգէն Քհնյ. Գուգույեան, Մասաչուսեց: Վարդանանց Ասպետներ, Տիար Նիկողոս Ս. Աթընըզեան, Բ. Աւագ Սպարապետ: Ռամկավար Ազատական Կուսակցութիւն, Տիարք Երուանդ Ազատեան եւ Բարգէն Մկրեան Համաատենապետեր Ամերիկայի եւ Գանատայի Շրջանային Վարչութեան: Տնօրէնուհի Սրբոց Նահատակաց Ազգային Վարժարանի Ազնուափայլ Տիկին Զարմինէ Պօղոսեան, Նիւ Եորք: Save the ARQ, Co-founders Mrs. Mary M. Hoogasian and Prof. Bedross Der Matossian.

ԳԱՆԱՏԱՅԷՆ

Տիար Օհան Կիւրեղեան:

ԱՐԺԱՆԹԻՆԷՆ

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Ատենապետ՝ Տիար Ռուբէն Քէշիշեան, Պուէնոս Այրես:

ՀՆԿԱՍՏԱՆԷՆ

Հոգեւոր Հովիւ Հնդկահայոց՝ Հոգշ. Ս. Խորէն Վրդ. Յովհաննիսեան, Կալկաթա:

ԱՌՍՏՐԱՆԻՍԷՆ

Առաջնորդ Աւստրալիոյ եւ Նոր Զելանդայի Թեմին՝ Գերշ. Ս. Հայկազուն Եպս. Նաճարեան:



ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԼՈՒՍԱՐԱՐԱՊԵՏԻ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՐԲՈՅ ԱԹՈՌՈՅՆ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

Նկատի ունենալով, որ Նորընտիր Պատրիարք՝ Ամենապատիւ Ս. Նուրիան Արք. Մանուկեան Սուրբ Աթոռոյ Լուսարարապետն էր եւ իր ընտրութեամբք որպէս Պատրիարք Առաքելական Սուրբ Աթոռին թափուր կը մնար Սուրբ Աթոռոյ Լուսարարապետի կարեւոր պաշտօնը՝ Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Ուխտի Միաբանական Ընդհանուր Ժողովը, 24 Յունուար 2013-ին, կէսօրէ վերջ ժամը 4-ին, Միաբանական Ընդհանուր Ժողովը գաղտնի քուէարկութեամբ եւ ձայներու բացարձակ մեծամասնութեամբ ընտրեց Գերշ. Ս. Սեւան Արք. Ղարիպեան որպէս Սուրբ Աթոռոյ Լուսարարապետ:

Քուէարկութեան արդիւնքը ստորեւ կը ներկայացնենք.-

Գերշ. Ս. Արիս Արք. Շիրվանեան 1 քուէ

Գերշ. Ս. Սեւան Արք. Ղարիպեան 18 քուէ

Հոգշ. Ս. Սամուէլ Ծ.Վրդ. Աղոյեան 1 քուէ

Հոգշ. Ս. Պարետ Ծ.Վրդ. Երեցեան 1 քուէ

Հոգշ. Ս. Բարսեղ Վրդ. Գալէմբերեան 8 քուէ

Սպիտակ 4 քուէ

Միաբանական Ընդհանուր Ժողովին ներկայ էին երեսուն երեք անդամներ, Միաբանական Ընդհանուր Ժողովի նիստի աւարտին, նորընտիր Սուրբ Աթոռոյ Լուսարարապետ Սրբազան Հայրը շնորհակալական խօսքն ըրաւ միաբան հայրերուն, որմէ յետոյ բովանդակ Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը գլխաւորութեամբ նորընտիր Պատրիարքի՝ առաջնորդուեցան դէպի Սրբոց Յակոբեանց Մայր Տաճար:

Մայր Տաճարի զանգակները ղօղանջեցին աւետիսը ընտրութեան արդիւնքին: Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարին մեջ, Գլխաղբի մատրան խորանին առաջ, նորընտիր Լուսարարապետ Սրբազան Հայրը ծնկաչոք աղօթքն ըրաւ եւ ստացաւ Մայր Տաճարի բանալիներն ու տուճարը: Գլխաղբի մատրան առաջ, միաբան հայրեր շնորհաւորեցին նորընտիր Լուսարարապետ Սրբազան Հայրը, որմէ յետոյ կրկին բարձրացան Պատրիարքարան:

Գերշ. Ս. Սեւան Արք. Ղարիպեան (աւագանի անունով Յովհաննէս) ծնած է 1940-ին Պէրուք, Լիբանան: Աբեղայական ձեռնադրութիւն ստացած է 1968-ին ձեռամբ Երջանկայիշատակ Ամենապատիւ Ս. Եղիշէ Արք. Տէրտէրեան Պատրիարքի: 1972 -ին ստացած է վարդապետական աստիճան՝ ձեռամբ Եղիշէ Պատրիարք Տէրտէրեանի: Ձեռնադրուած է Եպիսկոպոս 1988-ին ձեռամբ Երջանկայիշատակ Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգէն Ա. Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի: 2006-ին, Սեւան եպիսկոպոս Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական կոնդակով ստացած է արքութեան պատիւ:

Տասնեակ տարիներէ ի վեր, Սրբազան Հայրը կը վարէ Պատրիարքութեան Ելեւմտից Դիւանի կարեւոր պաշտօնը:



Նորընտիր Սուրբ Աթոռոյ Լուսարարապետ՝
Գերշ. Տ. Սեան Արք. Ղարիպեան:



Նորընտիր Սուրբ Աթոռոյ Լուսարարապետի շնորհակալական խօսքը:



Յետ Պատրիարքական Հատրութեան խմբանկար



669-2017

ԱՄԵՆ. Տ. ՆՈՒՐԶԱՆ ԱՐՔ. ՄԱՆՈՒԿԵԱՆ
 ՆՈՐԸՆՏԻՐ ՊԱՏՐԻԱՐՔ
 ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԱԹՈՌՈՅՆ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ

-----«»-----
 Կենսագրական Գիծեր

Ամենապատիւ Տ. Նուրիան Արք. Մանուկեան, աւագանի անունով՝ Պօղոս, ծնած է
 Հալէպ, 24 Յունիս 1948-ին: Նախնական ուսումը ստացած է Հալէպի Հայկազեան Վարժա-
 րանէն ներս:

1961-ին ընդունուած է Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի Դպրեվանքը:

1966-ին ընդունուած է Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Ժառանգաւորաց Վարժա-
 րանը:

1968-ին ձեռնադրուած է Սարկաւագ:

1971-ին ձեռնադրուած է կուսակրօն քահանայ՝ ձեռամբ Երջանկայիշատակ Եղիշէ
 Պատրիարք Տէրտէրեանի՝ վերակոչուելով Նուրիան Արեղայ:

1971-72 նշանակուած է Ժառանգաւորաց Վարժարանի փոխ-տեսուչ:

1972-73 նշանակուած է Զուիցերիոյ (ժնէ) Հոգեւոր հովիւ:

1973-ին ստացած է Վարդապետական աստիճան:

1976-77 նշանակուած է Ժառանգաւորաց Վարժարանի տեսուչ:

1974-80 նշանակուած է Իսրայէլի (Հայֆա-Եաֆա) հայ զաղութներուն հոգեւոր հովիւ:

1980-82 նշանակուած է Հոլանտայի հայոց հոգեւոր հովիւ:

1982-ին Երջանկայիշատակ Տ. Թորգոմ Արք. Մանուկեանի հրաւերով մեկնած է Նիւ
 Եորք եւ ուսանած՝ Եպիսկոպոսական Ընդհանուր Աստուածաբանական Ճեմարանէն ներս
 եւ աւարտած անոր եռամեայ շրջանը:

1985-93 եղած է Սփրինկֆիլտ քաղաքի հայոց (Մէսէչուսեց) հոգեւոր հովիւ:

1994-ին եղած է Հիւսթընի (Թէքսաս) Սուրբ Գէորգ Եկեղեցոյ հոգեւոր հովիւ:

1998-ին ընտրուած է Երուսաղէմի Հայ Պատրիարքութեան Ս. Աթոռի Լուսարարա-
 պետ:

1999-ի Դեկտեմբեր 14-ին ձեռնադրուած եւ օծուած է Եպիսկոպոս ձեռամբ՝ Ամենայն
 Հայոց Գարեգին Բ. Կաթողիկոսի:

2009-ին Երուսաղէմի Հայ Պատրիարք Ամենապատիւ Տ. Թորգոմ Արք. Մանուկեան
 Սուրբ Աթոռոյ Լուսարարապետ՝ Գերշ. Տ. Նուրիան Արք. Մանուկեանը նշանակած է
 Պատրիարքական Փոխանորդ:

2013 Յունուար 23-ին ընտրուեցաւ Երուսաղէմի Հայոց 97-րդ Պատրիարք Երուսա-
 ղէմի:

Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայրը հրատարակած է երկու պատմական
 վէպեր, «Եւ եղէւ Լոյս», եւ «Դարձեալ եղէւ լոյս», ինչպէս նաեւ 52 քարոզներու հատոր մը, Ս.
 Յակոբայ Բեմէն:

Պաղեստինի Պետութեան Նախագահ՝ Մահմուտ Ապպաս Ճանաչման Գիր Կը Յանձնէ Երուսաղէմի Նորընտիր Հայ Պատրիարքին

Հինգշաբթի, 28 Փետրուար 2013-ին, կէսօրուան ժամը 12ին, Ընտրեալ Պատրիարք՝ Տ. Նուրհան Արք. Մանուկեան, ընկերակցութեամբ Ս. Աթոռոյս Լուսարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեանի, Տ. Գեղամ Ծ. Վրդ. Զաքարեանի, Աւագ Թարգման՝ Գուսան Վրդ. Ալճանեանի, Տ. Բագրատ Վրդ. Պուրճէքեանի, Տ. Նորայր Վրդ. Գազազեանի, ուղուեցաւ դէպի Ռամալլայի Սուրբաթաա նախագահական ապարանքը՝ ստանալու պաշտօնական ճանաչման գիրը:

Արդէն հոն կը սպասէին Բեթղեհէմի Բարեջան Տեսուչ՝ Տ. Խաղ վարդապետն ու Վանքի Փաստաբան՝ Բաւտ Ամայան, որոնք հոն եկած էին ժամ մը առաջ, փրոթոբրոլային պատշաճ կարգադրութիւնները տեսնելու:

Նախագահական Ապարանքի մուտքին, Պատրիարք Սրբազան Հայրը դիմաւորուեցաւ Քրիստոնէից Բաժնի Նախագահական Յանձնաժողովի նախագահ՝ Հաննա Ամիրէի եւ Նախագահական Աւագանիի ներկայացուցիչներու կողմէ: Ջերմ դիմաւորութենէ ետք, Պատրիարք Սրբազան Հայրը եւ Սրբոց Յակոբեանց Միաբանական Ուխտի ներկայացուցիչները առաջնորդուեցան Նախագահին ժողովասրահը: Մի քանի րոպէ անց, Ժողովասրահ մուտք գործեց Նախագահ՝ Մահմուտ Ապպաս, որ ողջունեց Նորին Ամենապատուութիւնը ու անոր ընկերակցող Սրբոց Յակոբեանց Միաբանական Ուխտի ներկայացուցիչները:

Նորին Վսեմութիւն Պաղեստինի Պետութեան Նախագահ Մահմուտ Ապպաս շնորհաւորեց Ս. Պատրիարք Հայրը իր ընտրութեան առիթով, եւ ճանաչման գիրի ընթերցումէն ետք, յանձնեց զայն Պատրիարք Սրբազան Հօր անոր հետ յուշանուէր մը եւս յանձնելով: Նախագահ Ապպաս իր խօսքին մէջ շեշտեց, թէ Երուսաղէմի Հայ Պատրիարքութիւնը եւ զաղութը անմասն բաժինն են Պաղեստինի եւ անոր Պետութեան, Հայ Ժողովուրդը եւ Պաղեստինի Ժողովուրդը համանման ճակատագիր ունեցած են, եւ ի զուր չէր որ հանգուցեալ Նախագահ՝ Եասէր Արաֆաթ կը սիրէր արտայայտուիլ «Արաֆաթեան» ազգանունը շեշտելով:


Նախագահ Ապպասի խօսքէն վերջ, Պատրիարք Սրբազան Հայրը խօսք առաւ ու շնորհակալութիւն յայտնեց Նախագահ Ապպասին իր ընտրութեան ճանաչման եւ հաստատման համար եւ վստահեցուց Նորին Վսեմութիւնը թէ Սրբոց Յակոբեանց Ուխտը պիտի շարունակէ իր ուխտեալ ծառայութիւնը Սուրբ Երկրի մէջ, միշտ պաշտպանելով հաւատքի ու խղճի ազատութիւնը:

Պաշտօնական խօսքերէն ետք, բոլոր ներկաները նստեցան ու վայելեցին մտերմիկ խօսակցութիւնը Նախագահին ու անոր աւագանիին: Խմբանկարը առնուելէ ետք, Նախագահ Ապպաս բարի երթ մաղթեց Ս. Պատրիարք Հօր ու ողջագործումէն ետք, Պատրիարք Սրբազան Հայրն ու Միաբանութեան անդամները վերադարձան Սրբոց Յակոբեանց Մայրավանք:



Պաղեստինի Պետութեան Նախագահ՝ Վսեմաշուք Մահմուտ Ապպաս
Ճանաչման Գիր կը յանձնէ Նորընտիր Պատրիարք Սրբազան Հօր:





مرسوم رقم () لسنة 2013م
بشأن المصادقة على انتخاب بطريك القدس للأرمن الأرثوذكس

رئيس دولة فلسطين
رئيس اللجنة التنفيذية لمنظمة التحرير الفلسطينية
بعد الاطلاع على القانون الأساسي المعدل لعام 2003م وتعدلاته،
وقانون مجالس الطوائف الدينية رقم (2) لسنة 1938م وتعدلاته،
والاطلاع على نتيجة انتخابات بطريركية الأرمن الأرثوذكس بالقدس الشريف بتاريخ
2013/01/24م،
وبناء على الصلاحيات المخولة لنا،
وتحقيقاً للمصلحة العامة،

رسمنا بما هو آت:

مادة (1)

المصادقة على الانتخاب

المصادقة على نتيجة انتخابات بطريركية الأرمن الأرثوذكس، واعتماد صاحب الغبطة
البطريك المنتخب نور هان مانوجيان كبطريك القدس للأرمن الأرثوذكس اعتباراً من تاريخ
2013/01/24م.

مادة (2)

التنفيذ والنفاذ

على الجهات المختصة كافة، كل فيما يخصه، تنفيذ أحكام هذا المرسوم، ويعمل به اعتباراً من
تاريخ صدوره، وينشر في الجريدة الرسمية.

صدر في مدينة رام الله بتاريخ: 2013/02/28م

محمود عباس
رئيس دولة فلسطين
رئيس اللجنة التنفيذية لمنظمة التحرير الفلسطينية

**Յորդանանի Հաշիմական Թագաւոր
Ապտալլա Պին Հիւսէյն
Հաստատագիր Կը Յանձնէ
Երուսաղէմի Նորընտիր Հայ Պատրիարքին**

Չորեքշաբթի, 10 Ապրիլ 2013-ին, կէսօրէ ետք ժամը 2-ին, Յորդանանի Նորին Վեհափառութիւն՝ Ապտալլա Պին Հիւսէյն Հաշիմական Թագաւորը, իր պալատի դահլիճին մէջ ընդունեց Հայ Երուսաղէմի նորընտիր Պատրիարք Ամենապատիւ Տ. Նուրհան Արք. Մանուկեանը, զինք շնորհաւորելու եւ յանձնելու հաստատագիրը:

Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր կ'ընկերանային Ս. Աթոռոյ Լուսարարապետ Գերշ. Տ Մեան Արք. Ղարիպեան, Յորդանանի մէջ Պատրիարքական Փոխանորդ Գերշ. Տ. Վահան Արք. Թօփալեան եւ Հոգշ. Տ Գեղամ Ծ.Վրդ. Ջաքարեան: Նորին Վեհափառութեան հետ ներկայ էին եւս, Պալատի Փրոթօքրօլի եւ Իսլամական Աուքաֆի պատասխանատու անձերը:

Նորին Վեհափառութիւնը իր շնորհաւորական խօսքին մէջ շեշտեց Երուսաղէմի Իսլամական եւ Քրիստոնէական Սրբատեղեաց անխախտ պահպանումն ու անոնց պաշտպանութիւնը: Հայ Երուսաղէմի Պատրիարքութիւնը ըլլալով տէրն ու տիրականը Տօսրինական Տեղեաց Սուրբ Երկրին մէջ՝ Յոյն Ուղղափառ Պատրիարքութեան եւ Ֆրանչիսկեան Լատին Միաբանութեան հետ, Նորին Վեհափառութիւնը անդրադարձաւ վերջերս Պաղեստինեան Պետութեան Նախագահ՝ Վսեմաշուք Մահմուտ Ապպասի եւ Հաշիմական Թագաւորութեան միջեւ ստորագրուած համաձայնագրին մասին, ըստ որում՝ Հաշիմական Թագաւորութիւնը պիտի շարունակէ մնալ Իսլամական եւ Քրիստոնէական Սրբատեղեաց պաշտպանը:

Պատրիարքական Ընտրութեան Հաստատագրի յանձնումէն ետք, Նորին Ամենապատուութիւնը իր շնորհակալական խօսքը յայտնեց Նորին Վեհափառութեան եւ խոստացաւ լաւագոյնս ընել յօգուտ Սրբատեղեաց, Երուսաղէմի, Պաղեստինի եւ Յորդանանի Հայ Համայնքներուն:

Նորին Վեհափառութեան հետ սոյն սիրալիր հանդիպումը իր եզրին հասաւ ողջագուրմամբ եւ ցնոր տեսութեան ակնկալութիւններով:



Յորդանանի Հաշիմական Թագաւոր՝ Ապտալա Պըն Հիւսէյն
Հաստատագիրը կը յանձնէ Նորընտիր Պատրիարք Սրբազան Հօր:



.....
الرقم.....
التاريخ.....
الموافق

بسم الله الرحمن الرحيم، والحمد لله الذي أعزنا بالإسلام،
واكرمنا بالإيمان وجمعنا وألف بين قلوبنا، ومكن لنا من
البلاد، وجعلنا اخواناً متحابين، ويعد،

نحن عبدالله الثاني ابن الحسين ملك المملكة الأردنية الهاشمية
بعد الاطلاع على ما عرضه علينا رئيس وزراءنا نصر مرسومنا
الملكي التالي:-

لما كان منصب الكرسي البطريركي للأرمن الأرثوذكس في القدس الشريف
والأردن قد شغر.

وبما أن صاحب الغبطة رئيس الاساقفة نورهان ماتو غيان قد تم انتخابه في
اليوم الثاني عشر من ربيع أول لعام ١٤٣٤ هجرية الموافق لليوم الرابع والعشرين
من شهر كانون الثاني لعام ٢٠١٣ ميلادية بطريركاً للأرمن الأرثوذكس في القدس
الشريف والأردن.

ولما عرفناه فيه من اخلاص لنا، وولاء لبيتنا الهاشمي، وما عهدنا فيه من
لباقة ودراية واقتدار على اجراء الامور المذهبية، وتأمين المحبة والمساواة بين افراد
طائفة الأرمن الارثوذكس فإتينا نعلن اعترافنا وتصديقنا لهذا الانتخاب، ونبدي موافقتنا
الملكية لتعيين صاحب الغبطة رئيس الاساقفة نورهان ماتو غيان لهذا المنصب في
المملكة الأردنية الهاشمية والقدس الشريف، ونلحق به جميع السلطات والحقوق
والمهام المذكورة اعلاه، ونمكنه حق ممارستها، وننيط به جميع الحقوق والامتيازات
المرتبطة بهذا المنصب بموجب القانون وبحكم التعامل والعادات القديمة التي يتمتع
بها.

صدر عن قصرنا بسمان في ٢٥ ربيع الثاني ١٤٣٤ هجرية
الموافق في ٧ آذار ٢٠١٣ ميلادية

بأمر صاحب الجلالة الملك المعظم
رئيس الوزراء

Յորդանանի Հաշիմական Թագաւորին յանձնած Հաստատագրին օրինակը:

Իսրայելի Պետության Ճանաչման Գիրը Երուսաղեմի Նորընտիր Պատրիարքին

Երեքշաբթի, 3 Յուլիս 2013-ին, կեսօրէ ետք ժամը 2ին, Ընտրեալ Պատրիարք՝ Տ. Նուրիան Արք. Մանուկեան, ընկերակցութեամբ Ս. Աթոռոյս Լուսարարապետ՝ Գերշ. Տ. Սեւան Արք. Ղարիպեանի եւ Աւագ Թարգման՝ Գուսան Վրդ. Ալճանեանի, ուղուեցաւ դէպի Քնէտէթի Խորհրդարանը, հանդիպելու Իսրայելի Պետության Ներքին Գործոց Նախարար՝ Կիտոն Սաարի հետ եւ անկէ ստանալու պաշտօնական ճանաչման գիրը:

Խորհրդարան հասնելէ ետք, նորընտիր Պատրիարքն ու իրեն ընկերակիցները դիմաւորուեցան Պետական Ներկայացուցիչներու կողմէ եւ առաջնորդուեցան Ներքին Գործոց Նախարարի ժողովասենեակը, ուր տեղի պիտի ունենար Պետական Պաշտօնական Ճանաչման Գիրի յանձնման արարողութիւնը:

Նախարար Սաար եւ Իսրայելի Պետական Ներկայացուցիչներ ջերմօրէն ընդունեցին Նորընտիր Սրբազան Պատրիարքը եւ բարեմաղթութիւններ ըրին Իր ընտրութեան բարեբաստիկ առիթով: Ընդունելութենէն ետք, Նախարար Սաար Պատրիարք Սրբազան Հօր յանձնեց ճանաչման Գիրը եւ շնորհաւորեց զայն յանուն Իսրայելի Պետության:



Իսրայելի Պետության Ներքին Գործոց Նախարար՝
Կիտոն Սաար Նորընտիր Պատրիարք Սրբազան Հօր
կը յանձնէ ճանաչման Գիրը:



שר הפנים
Minister of Interior
وزير الداخلية

כתב הכרה

בהמשך להחלטת הממשלה מס' 433 מיום 23.6.2013 לפיה החליטה הממשלה להכיר בכבוד הארכיבישוף **Nourhan manougian** כפטריארך הארמני של ירושלים, בהתאם להחלטת האסיפה הכללית של "אחוות יעקב הקדוש" של הפטריארכיה הארמנית בירושלים מיום 23.1.2013 ומתוקף הסמכות שניתנה לי על ידי הממשלה בהחלטתה זו, הנני מעניק להוד מעלתו **Nourhan manougian**, "כתב הכרה" כפטריארך הארמני של ירושלים.

התשע"ג 2013
23 יולי

נרען סער
שר הפנים

רחוב קפלן 2, קרית הממשלה, ירושלים 91950, טל: 02-6701400, פקס: 02-5666376
2 Kaplan St., Kiriat Ben-Gurion, Jerusalem 91950, Tel: 02-6701400, Fax: 02-5666376
شارع كيلان 2, كريات همتلاه، القدس 91950، تلفون: 02-6701400، فاكس: 02-5666376

Իսրայէլի Պետութեան Ներքին գործոց Նախարարի
խանձանձան Գիրին օրինակը:



Յոյն Ուղղափառ Եկեղեցւոյ Երուսաղէմի Պատրիարք Թէոֆիլոս Գ.
կը շնորհաւորէ Նորընտիր Պատրիարք Սրբազան Հայրը:



**ԳԱՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ
ԱՄԵՆ. Տ. ՆՈՒՐՀԱՆ ԱՐՔ. ՄԱՆՈՒԿԵԱՆԻ
ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԱԹՈՌՈՅՆ
97-րդ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ**

Երեքշաբթի, 4 Յունիս 2013, յետ միջօրեի ժամը 4-ին, տեղի ունեցաւ Ամենապատիւ Տ. Նուրիան Արք. Մանուկեանի գահակալութեան արարողութիւնը Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, ի ներկայութեան տեղացի եւ արտասահմանէն ժամանած հոգեւորական ու աշխարհական հիւրերու: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Ամենայն Հայոց Հայրապետութեան ներկայացուցիչներն էին Գերշ. Տ. Նաթան Արք. Յովհաննիսեան ու Վահան Եպս. Յովհաննէսեան, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ներկայացուցիչներն էին Կիպրոսի Թեմին Կաթողիկոսական Փոխանորդ՝ Գերշ. Տ. Վարուժան Արք. Հերկէլեան եւ Թեհրանի Թեմին Առաջնորդ՝ Գերշ. Տ. Սեպուհ Արք. Սարգիսեան, Կոստանդնուպոլսոյ Պատրիարքութենէն ներկայացան Պատրիարքական Ընդհանուր Փոխանորդ՝ Գերշ. Տ. Արամ Արք. Աթէշեան եւ Գերշ. Տ. Սահակ Եպս. Մաշալեան: Սրբոց Յակոբեանց Միաբանական Ուխտին արտասահման ծառայող միաբաններէն ժամանեցին Միացեալ Նահանգներու Արեւելեան Թեմին Առաջնորդ՝ Գերշ. Տ. Խաժակ Արք. Պարսամեան, Միացեալ Նահանգաց Եկեղեցիներու Խորհուրդին Ատենապետ՝ Գերշ. Տ. Վիգէն Արք. Այբազեան եւ Հոգշ. Տ. Վազգէն Ծ.Վրդ. Գարայեան:

Պատրիարք Սրբազան Հայրը գեղեցկօրէն զգեստաւորուած եւ գաւազան ի ձեռին, շրջապատուած նորընտիր Լուսարարապետով եւ Արքեպիսկոպոսներով, միաբանութեան եւ ժառանգաւոր սաներու կողմէ կազմած թափօրով, ի ներկայութեան սաղիմահայ եւ օտար հաւատացեալներու, «Հրաշափառ»ի երգակցութեամբ մուտք գործեց Սրբոց Յակոբեանց Մայր Տաճար: Գլխադրի մատրան առաջ ձևկաշոք ուխտն ըրաւ, մինչ ժառանգաւոր սաներ կ'երգէին «Որ էնն յէութեան» Որդւոց Որտոման օրհներգը: Ապա թափօրը յառաջացաւ դէպի դաս, ուր կարդացուեցաւ «Ուրախ եղէ ես» սաղմոսը, իր յարակից քարոզով եւ աղօթքով:

«Ուրախ Լեր»ի գմայլելի շարականի երգակցութեամբ՝ հինգ եպիսկոպոսներ եւ գաւազանակիրը Սրբազան Պատրիարքը առաջնորդեցին Աւագ Խորան: Լուսարարապետ Սրբազան Հայրը յանուն միաբանութեան արտասանեց հետեւեալ ուղերձը առ Սրբազան Պատրիարքն:

ԼՈՒՍԱՐԱՐԱՐՊԵՏ ՍՐԲԱԶԱՆ ՀՕՐ ՈՒՂԵՐԸ

Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայր,

Հոգեկան ցնծութեան մէջ է այսօր Սրբոց Յակոբեանց Առաքելական Աթոռը: Երանութեան պահ մըն է, որ կ'այայրի Սրբոց Յակոբեանց Զինուորեալ Միաբանութիւնը: Անհուն բերկրանքի մէջ է Հայ Երուսաղէմը:



Նորընտիր Պատրիարք Սրբազանը զգեստաւորեալ «Հրաշափառ»ով
մուտք Սրբոց Յակոբեանց Տաճար:



Խնկարկութիւն Գլխադրի մատրան մէջ:

Տոնական այս պահուն, հոգեպէս զգածուած ու երջանիկ կը զգամ՝ նուիրական այս պարտականութիւնը կատարելու եւ ողջունելու Ձերդ Ամենապատուութիւնը գահակալութեան բարեբաւորիկ առիթով:

Սրբոց Յակոբեանց Առաքելական այս Աթոռը, դարեր շարունակ թիավարած է հոսանքն ի վեր, համտեսած է տառապանքի եւ նեղութեան դառնութիւնը: Անցած է կործանարար փոթորիկներու ընդմէջէն, կորսնցնելով յաճախ նիւթը բայց երբէք հոգին: Եւ ի գուր չէ, որ Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը կոչուած է Ձինուորեալ Միաբանութիւն, որովհետեւ գիտցած է անձնուիրութեամբ եւ ի գին կեանքի պահել ու անխաթար պահպանել մեր ազգի դարաւոր իրաւունքները:

Դուք կանչուեցաք արժանի ժառանգորդը դառնալու մեր նախահայրերուն, բազմելով գահակալելու այս նուիրական Աթոռին եւ Ձեր ծառայութեամբ ու Ձեր հաւատքի անխախտ նուիրումով առաւել եւս պայծառացնելու զայն:

Մենք Ձեզ ճանչցած ենք Ձեր մատղաշ տարիքէն, ու Ձեր մէջ տեսած նաեւ ազնիւ ու բարի սրտի տէր, զթառատ հոգիով լեցուն անձնաւորութիւնը: Ձեր սէրը հանդէպ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցիին, ազգին ու այս Սուրբ Աթոռին միշտ եղած է անսակարկ ու նախանձելի, որովհետեւ Ձեր հաւատքն ու ծառայութիւնը, Ձեր երազներն ու ձգտումները, Ձեր համակ երիտասարդութիւնը, հասակ ու մարմին առած են Սրբոց Յակոբեանց Վանքի կամարներուն տակ: Հակառակ այն իրողութեան, որ Ձերդ Ամենապատուութիւնը դրկուեցաւ հեռաւոր ափեր, ծառայելու Հայաստանեայց Առաքելական Եկեղեցիին ու Ազգին, սակայն Ձեր սրտին ու հոգիին մէջ Երուսաղէմի ու Սուրբ Աթոռի հանդէպ Ձեր սէրը առաջնորդեց Ձեր ոտքերը ետդարձ դէպի Երուսաղէմ, տունն ու տաղաւարը Ձեր մանկութեան, երիտասարդութեան, Ձեր յուշերուն ու ապրումներուն: Տեսած ենք Ձեր մէջ այն մտաւորականը, որ իր նախնիներուն նման, ունի իր մէջ սէրը հանդէպ գիրին ու գրականութեան, Երուսաղէմի Հայոց դարաւոր պատմութեան, գոհողութիւններուն եւ Սրբատեղեաց Իրաւունքներուն:

Սրբոց Յակոբեանց Ձինուորեալ Միաբանութիւնը ընտրեց Ձերդ Ամենապատուութիւնը որպէս Առաքելական այս Սուրբ Աթոռին 97րդ Պատրիարքը, քաջ գիտակցելով, որ Ձերդ Ամենապատուութիւնը որպէս քաջ եւ իմաստուն հովուապետ նախանձախնդրօրէն ու անզիջելի կամքով հետեւողական պիտի ըլլայ Սիոնի բարձունքին թառած՝ Սրբոց Յակոբեանց այս Աթոռը անսասան պահելու, սրբատեղեաց մէջ մեր իրաւունքները անխափան պահելու, ի բարձունս առաջնորդելու եւ Սրբոց Յակոբեանց Ձինուորեալ Միաբանութեան շարքերը առաւել եւս խտացնելու եւ ամրացնելու ուղղութեամբ:

Լիառատ յուսով ենք, որ Ձերդ Ամենապատուութիւնը արթուն հովուապետի նման, նախանձախնդրօրէն պիտի շարունակէ սրբազան գործը մեր նախնիներուն, միշտ Ձեր շուրջը զօրավիզ ունենալով Սրբոց Յակոբեանց Ձինուորեալ Միաբանութիւնը ի շինութիւն եւ բարօրութիւն Առաքելական այս Սուրբ Աթոռին:

Շատ են կարիքները այս դարաւոր հաստատութեան, սակայն վստահ ենք, որ Աստուած պիտի հարթէ Ձեր ճանապարհը, ու Ձեր անձնուէր ոգիով պիտի յաղթահարէք բոլոր դժուարութիւնները:

Ամենապատիւ Տէր, այս քաղցր յոյսերով Ձերդ Ամենա-պատուութեան կը յանձնենք Երուսաղէմի Հայ Պատրիարքութեան Ասան, Հովուապետական գաւազանը, Պատրիարքական Իշխանութեան խորհրդանշանը, անով հովուելու եւ առաջնորդելու Ձեր հօտը, մաղթելով որ ան Ահարոնի գաւազանին նման դառնայ ԾԱՂԿԵԱԼ, ԳԱԻԱԶԱՆ մը: Ի սրտէ կը մաղթենք Ձերդ Ամենապատուութեան քաջառողջութիւն, անկուրն կամք եւ փառքի օրեր: Թող Ամենակալն Աստուած Ձեզ միշտ անսասան պահէ ու Տիրոջ օրհնութիւնը անպակաս ըլլայ Ձեր վրայէն:



Գահակալութեան հանդէսին ներկայ Պետական, օտար յարանուանութեանց
ներկայացուցիչներ, հիւպատոսներ:

Այժմ, թոյլ տուէք հրաւիրելու Ձերդ Ամենապատուութիւնը, ծնրադիր կատարելու Ձեր կանոնական ուխտը առաջի սուրբ սեղանոյս, եւ թող Ս. Աթոռոյս պաշտպան սուրբերը օրհնեն, զօրացնեն եւ արիացնեն Ձերդ Ամենապատուութիւնը: Ամէն:

Լուսարարապետ Սրբազան Հօր Ուղերձի ընթերցումէն ետք, Պատրիարքական ցուպը՝ «Ասան», պաշտօնապէս յանձնուեցաւ Պատրիարք Հօր՝ որ ապա հրաւիրուեցաւ ծնրադիր կատարելու իր կանոնական ուխտը:

Աւագ Սեղանին առջեւ գլխաբաց ծնրադրեց Սրբազան Պատրիարքը եւ արտասանեց իր ուխտը, որ է հետեւեալը.

«Խոստանամ եւ ուխտեմ առաջի Աստուծոյ եւ Սրբոյ սեղանոյս, խղճի մտօք եւ հաւատարմութեամբ առնել գործադրութիւն կարգաց կանոնաց եւ աւանդութեանց Միաբանութեան Առաքելական Աթոռոյս Սրբոց Յակոբեանց այլ եւ հաւատարմութեամբ եւ աչալրջութեամբ հսկել պահպանութեան Հայկական իրաւանց ի Սուրբ Տեղիս:

Ուխտեմ լինել հաւատարիմ կանոնաց եւ աւանդութեանց Հայաստանեայց Առաքելական եւ Ուղղափառ Սուրբ Եկեղեցւոյ եւ ճանաչել զհոգւետր իշխանութիւն Սրբազնագոյն Կաթողիկոսին Ամենայն Հայոց, որ ի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին:

Ընկալցի Տէր զուխտս մեր, այց արասցէ: եւ օգնեցէ մեզ Տէր, ի վաղորդայնէ մինչեւ ի վաղորդայն»:

Ուխտէն ետք, զգեստաւորուած Արքեպիսկոպոսները, գլխաւորութեամբ՝ Լուսարարապետ Սրբազան Հօր, իրենց աջերը դրին Ամենապատիւ Սրբազան Հօր գլխուն վրայ, արտասանելով «Պահպանիչ» աղօթքը:

Օրհնութեան արարողութենէն ետք, յանուն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, Ամենայն Հայոց Հայրապետի շնորհաւորական խօսքը կարդաց Գերշ. Տ. Նաթան Արք. Յովհաննիսեան:

Երուսաղէմ, 4 Յունիս 2013

Ամենապատիւ Պատրիարք Սրբազան,

Համայն հայութեան հոգւետր կենտրոնից՝ Քրիստոսահիմն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից, Հայրապետական Մեր ողջոյնն ու օրհնութիւնն ենք բերում Ձեզ, սիրելի հոգւետր հայրերին եւ բարեպաշտ ժողովրդին՝ Ձեր գահակալութեան այս հոգենորոգ աղիթով:

Հայցում ենք Տիրոջ օգնութիւնն ու զօրակցութիւնը Ձեզ, որպէսզի Ձեր քաջակորով առաջնորդութեամբ եւ հոգածու խնամքի ներքոյ Սրբոց Յակոբեանց միաբանութիւնը եւ հաւատաւոր մեր բարեպաշտ զաւակները Քրիստոսակոյի Երուսաղէմում շարունակեն մշտավառ պահել կանթեղը հայոց հաւատքի եւ անմար՝ լոյսը հայ կեանքի, եւ իրենց անմնացորդ նուիրումով պայծառութիւն յաւելնէ Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեանը եւ Հայաստանեայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն:



Սուրբ Աթոռոյ Լուսարարապետ՝ Գերշ. Տ. Սեան Արք. Ղարիպեան
կը կարդայ Պատրիարք Սրբազան Հօր գահակալութեան ուղերձը:



Ուխտի պահուն:

Մեր ժողովրդի քրիստոնեական դարձի առաջին իսկ օրերից է նրա աղօթքը ջերմեանդօրէն երկինք բարձրացել Երուսաղէմից եւ տէրունական նուիրական սրբավայրերից: Հայ թագաւորների, նախարարների, բազմահազար ուխտաւորների նուիրատուութիւններով հայոց տասնեակ վանքեր են հաստատուել ու խնամուել Սուրբ Երկրում, դարերի հողմերի մէջ քարոզել ու վկայել Քրիստոսի Աւետարանը, պահպանել քրիստոնեական կեանքը, եւ արտայայտել խաղաղ ու արդար աշխարհի յոյսերն ու նուիրական իղձերը մեր ժողովրդի: Հաւատքի վկայութեան այդ առաքելութիւնը շարունակելով՝ Երուսաղէմի Հայոց Պատրիարքութիւնը պաշտպանն ու պահապանն է մեր սրբութիւնների, բազմադարեայ յիշատակների ու ամենդրոյնների, որոնք գորացնում են մեր ժողովրդի հաւատքն ու եկեղեցանուիրումը, սէրն ու հաւատարմութիւնը նախնեաց ժառանգութեանն ու արժէքներին: Փառք ենք բարձրացնում երկինք, որ Աստուծոյ ամենակեցոյց շնորհներով այսօր էլ Սուրբ Երկրում անդադար է հայոց պաշտամունքը, անդադար է Սրբոց Յակոբեանց Ուխտեալ միաբանութեան աղօթքը աշխարհի խաղաղութեան եւ մեր ժողովրդի բարօրութեան, իր ազատ կեանքը կերտող մեր Հայրենիքի հզօրութեան եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու յաւէտ պայծառութեան համար:

Ամենապատիւ Պատրիարք, սիրելի հոգեւոր հայրեր եւ բարեպաշտ ժողովուրդ, Ձեր նուիրումի ու ջանքերի շնորհիւ Երուսաղէմի Հայոց Պատրիարքութիւնը շարունակում է մնալ նաեւ մեր մշակոյթի օրրաններից մէկը: Այստեղ հաւարուել ու պահպանում են հնագոյն ձեռագրեր ու վաւերագրեր, հարուստ գրականութիւն, պատմական եւ մշակութային արժէքներ: Միաբանութեան անդամները դարեր շարունակ իրենց աշխատութիւններով հարստացրել են հայոց վարդապետական, եկեղեցագիտական, պատմաբանասիրական միտքը, իսկ Սրբոց Յակոբեանց տպարանում հրատարակուած գրքերը՝ մեր ժողովրդի հոգին ու միտքը:

Այսօր, Երուսաղէմի Հայոց նորընտիր Պատրիարքիդ գահակալութեան առիթով, Մենք աղօթքով ենք յիշում երջանկայիշատակ Պատրիարքներին, ովքեր առաջնորդել են հայոց հոգեշէն կեանքը Տէրունական երկրում, ապահով, թէ դժուարին ժամանակներում խնամել ու շէնացրել են Պատրիարքութիւնը, որն իր առաքելութեամբ հայոց եւ համաքրիստոնեական հոգեւոր անդաստանի անբաժան մասն է: Աղօթում ենք ի Տէր հանգուցեալ երջանկայիշատակ Պատրիարք Տ. Թորգոմ Արք. Մանուկեանի հոգու հանգստութեան համար, ով տաս-նամեակներ շարունակ անյոզնաբեկ ջանքեր ներդրեց Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան սրբավայրերի պահպանութեան եւ Պատրիարքութեան առաքելութեան նորոգ արդիւնաւորման համար: Մենք գիտենք, թէ ներկայիս ինչպիսի խնդիրների առջեւ է կանգնած Երուսաղէմի Սուրբ Աթոռը: Մաղթում ենք Ձեզ, սիրելի Պատրիարք Սրբազան, որ երանաշնորհ Ձեր նախորդների ոգով եւ նախանձախնդրութեամբ, Ձեր կորովով ու եռանդով կարող լինեք յաղթահարելու առկա դժուարութիւնները: Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան նկատմամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը մշտապէս սէր եւ հոգածութիւն է դրսեւորել, եւ Մենք այսօր եւս աջակից ենք լինելու Ձեզ, Երուսաղէմի ուխտեալ միաբանութեանը՝ Ձեր առաքելութիւնն իրականացնելու եւ ըստ ամենայնի արգասաւորելու գործում:

Մեր ժողովրդի քրիստոնեական դարձի առաջին իսկ օրերից է նրա աղօթքը ջերմեռանդորեն երկինք բարձրացել Երուսաղեմից եւ տերունական նուիրական սրբավայրերից: Հայ թագաւորների, նախարարների, բազմահազար ուխտաւորների նուիրատուութիւններով հայոց տասնեակ վանքեր եւ հաստատուել ու խնամուել Սուրբ Երկրում, դարերի հողմերի մէջ քարոզել ու վկայել Քրիստոսի Աւետարանը, պահպանել քրիստոնեական կեանքը, եւ արտայայտել խաղաղ ու արդար աշխարհի յոյսերն ու նուիրական իղձերը մեր ժողովրդի: Հաւատքի վկայութեան այդ առաքելութիւնը շարունակելով՝ Երուսաղեմի Հայոց Պատրիարքութիւնը պաշտպանն ու պահպանն է մեր սրբութիւնների, բազմադարեայ յիշատակների ու ասանդոյթների, որոնք զօրացնում են մեր ժողովրդի հաւատքն ու եկեղեցանուիրումը, սերն ու հաւատարմութիւնը նախնեաց ժառանգութեանն ու արժեքներին: Փառք ենք բարձրացնում երկինք, որ Աստուծոյ ամենակեցոյց շնորհներով այսօր էլ Սուրբ Երկրում անդադար է հայոց պաշտամունքը, անդադար է Սրբոց Յակոբեանց Ուխտեալ միաբանութեան աղօթքը աշխարհի խաղաղութեան եւ մեր ժողովրդի բարօրութեան, իր ազատ կեանքը կերտող մեր Հայրենիքի հզօրութեան եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու յաւետ պայծառութեան համար:

Ամենապատիւ Պատրիարք, սիրելի հոգեւոր հայրեր եւ բարեպաշտ ժողովուրդ, Ձեր նուիրումի ու ջանքերի շնորհիւ Երուսաղեմի Հայոց Պատրիարքութիւնը շարունակում է մնալ նաեւ մեր մշակոյթի օրրաններից մէկը: Այստեղ հաւաքուել ու պահպանուում են հնագոյն ձեռագրեր ու վաւերագրեր, հարուստ գրականութիւն, պատմական եւ մշակութային արժեքներ: Միաբանութեան անդամները դարեր շարունակ իրենց աշխատութիւններով հարստացրել են հայոց վարդապետական, եկեղեցագիտական, պատմաբանասիրական միտքը, իսկ Սրբոց Յակոբեանց տպարանում հրատարակուած գրքերը՝ մեր ժողովրդի հոգին ու միտքը:

Այսօր, Երուսաղեմի Հայոց նորընտիր Պատրիարքիդ գահակալութեան առիթով, Մենք աղօթքով ենք յիշում երջանկայիշատակ Պատրիարքներին, ովքեր առաջնորդել են հայոց հոգեշէն կեանքը Տէրունական երկրում, ապահով, թէ դժուարին ժամանակներում խնամել ու շէնացրել են Պատրիարքութիւնը, որն իր առաքելութեամբ հայոց եւ համաքրիստոնեական հոգեւոր անդաստանի անբաժան մասն է: Աղօթում ենք ի Տէր հանգուցեալ երջանկայիշատակ Պատրիարք Տ. Թորգոմ Արք. Մանուկեանի հոգու հանգստութեան համար, ով տաս-նամեակներ շարունակ անյոգնաբեկ ջանքեր ներդրեց Երուսաղեմի Հայոց Պատրիարքութեան սրբավայրերի պահպանութեան եւ Պատրիարքութեան առաքելութեան նորոգ արդիւնաւորման համար: Մենք գիտենք, թէ ներկայիս ինչպիսի խնդիրների առջեւ է կանգնած Երուսաղեմի Սուրբ Աթոռը: Մաղթում ենք Ձեզ, սիրելի Պատրիարք Սրբազան, որ երանաշնորհ Ձեր նախորդների ոգով եւ նախանձախնդրութեամբ, Ձեր կորովով ու եռանդով կարող լինեք յաղթահարելու առկայ դժուարութիւնները: Երուսաղեմի Հայոց Պատրիարքութեան նկատմամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը մշտապէս սեր եւ հոգածութիւն է դրսեւորել, եւ Մենք այսօր եւս աջակից ենք լինելու Ձեզ, Երուսաղեմի ուխտեալ միաբանութեանը՝ Ձեր առաքելութիւնն իրականացնելու եւ քստ ամենայնի արգասաւորելու գործում:

Միաձևի Իջման Սուրբ Սեղանի առջև մեր և վանարնակ մեր միաբանության սրտաբույս աղօթքն է առ Բարձրեալն Աստուած՝ որ հանապազ գորավիզ լինի Ամենապատիւ Պատրիարքիդ՝ շնորհելով կենաց արեւշատ օրեր և արգասալի իրագործումներ: Թող Երկնաւոր Տէրը Իր ամենաաատ շնորհների և օրհնութեան մեջ պահպանի Երուսաղէմի Հայոց Պատրիարքութիւնը, գորացնի Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը՝ ի փառս իր Սուրբ Անուան, Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու և ի մխիթարութիւն համայն հաւատաւոր մեր ժողովրդի:

Ողջ լերուք ի Տէր, գորացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն և յաւէտ օրհեալ ի մենջ: Ամէն:

Օրհնութեամբ՝

Գարեգին Բ.
Կաթողիկոս Ամենայն Հայոց

Յանուն Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան շնորհաւորական խօսքը կարդաց Գերշ. Տ. Վարուժան Արք. Ներկելէան:

Անթիլիաս, 25 Մայիս 2013
Թիւ 103/13

Ամենապատիւ
Տ. Նուրհան Արքեպսկ. Մանուկեան
Պատրիարք Հայոց Երուսաղէմի
Երուսաղէմ
Սիրեցեալ Եղբայր ի Քրիստոս,

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի Մայրավանքէն հայրապետական օրհնութեամբ ու եղբայրական ջերմ սիրով կ'ողջունենք Ձեզ: Աստուծոյ օրհնութեամբ և Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան միաբանութեան հաւարական որոշումով դուք ընտրուեցաք Պատրիարք Երուսաղէմի Հայոց Առաքելական Սուրբ Աթոռոյ:

Արդարեւ, դուք այս յոյժ կարեւոր պատասխանատուութեան կը կոչուիք մեր ժողովուրդի պատմութեան մէկ վճռական հանգրուանին: Հանգրուան մը, որ մեր եկեղեցւոյ, հայրենիքին ու ժողովուրդին պատասխանատուներէն կը պահանջէ մեր ներքին միասնականութիւնը ամրապնդել ու մեր ազգին գերագոյն երազներու իրագործման ի խնդիր մեր յանձնառութիւնը ամրացնել:

Դուք Պատրիարքական Աթոռ կը բարձրանաք մեր եկեղեցւոյ պատմութեան մէկ վճռադրոշմ հանգրուանին: Հանգրուան մը, որ մեր եկեղեցւոյ Նուիրապետական չորս Աթոռներէն կը պահանջէ իրենց հոգեւոր առաքելութեան ու ազգային ծառայութեան նոր որակ ու մղում տալ:

Վերջապէս, Սիրելի՛ Պատրիարք Սրբազան, դուք Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան առաքելութիւնը ղեկավարելու դժուար պարտականութեան կը կոչուիք Միջին Արեւելքի պատմութեան մէկ ճակատագրական հանգրուանին: Հանգրուան մը, որ կը պահանջէ մեր հոգեւոր ու համայնքային առաջնորդներէն բարձրագոյն աստիճանի նախանձախնդրութեամբ ու զգուշաւորութեամբ կատարել իրենց պարտաւորութիւնը՝ պաշտպանելով մեր եկեղեցւոյ ու ժողովուրդին ընդհանրական ու գերագոյն շահերը:



Գերշ. Ս. Նաթան Արք. Յովհաննիսեան կը կարդայ յանուն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, Ամենայն Հայոց Հայրապետի շնորհատրական խօսքը:



Գերշ. Ս. Վարուժան Արք. Հերկելեան կը կարդայ յանուն Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան շնորհատրական խօսքը:

Մեզի ծանօթ են Երուսաղէմէն ներս գոյութիւն ունեցող ներքին զգայնութիւնները քաղաքական թէ կրօնական: Նաեւ Մենք քաջ գիտենք, թէ Ձեր նախորդները եւ ողջ միաբանութիւնը միշտ տեր են կանգնած մեր եկեղեցւոյ իրաւունքներուն: Ահա թէ ինչու մեր եկեղեցւոյ պատմութեան մէջ Երուսաղէմի Հայոց Պատրիարքութիւնը նկատուած է պաշտպան Սուրբ Տեղեաց եւ պատմութենէն ժառանգուած եւ օրինական հիմք ու պետական ճանաչում ունեցող մեր եկեղեցւոյ իրաւունքներուն:

Մենք Ձեզ անձնապէս մօտէն կը ճանչնանք 1961-էն ի վեր, որպէս դասընկեր Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքէն ներս: Ձեր մէջ տեսած ենք նուիրեալ ու մտաւորական հոգեւորականը: Հետեւաբար, վստահ ենք, որ Ձեր ունեցած արժանիքները ու տարիներու ընթացքին ձեռք ձգած հարուստ փորձառութիւնը ի սպաս պիտի դնէր Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան կեանքին առաւել լայն ծառայողան ու առաքելութեան առաւել յ ծաղկման:

Ձեր Պատրիարքական գահակալութեան այս ուրախ առիթով, կը բաժնենք Ձեր ու Ձեր գլխաւորած միաբանութեան ուրախութիւնը ու Ձեզի կը մաղթենք եկեղեցաշէն իրագործումներով լեցուն երկար գահակալութիւն: Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ միշտ կենսունակ պահէ Երուսաղէմի Հայոց Պատրիարքութիւնը իր միաբանութեամբ, որպէսզի ան կարենայ վերանորոգ հաւատքով շարունակել իր առաքելութիւնը:

Եղբայրական ջերմ սիրով,

Աղօթակից

Արամ Ա. Կաթողիկոս

Մեծի Տանն Կիլիկիոյ

Յանուն Կոստանդնուպոլսոյ Պատրիարքութեան շնորհաւորական խօսք կարդաց Պատրիարքական Ընդհ. Փոխանորդ՝ Գերշ. Տ. Արամ Արք. Աթէշեան:

Ամենապատիւ Ս. Պատրիարք Հայր,
Եւ Հոգեւոր Եղբայրներ

Այսօր, շատ սիրով մէկտեղուեցանք, բաժնեկից դառնալու դարաւոր ու պատմական Մրբոց Յակոբեանց Վանքին երդիրին տակ ծաւալող հոգեւոր ուրախութեան:

Վերջին անգամ մորմորած սրտով այցելած էինք Ս. Երուսաղէմ, յուղարկաւորելու համար մեր եկեղեցւոյ մեծանուն հոգեւորականներէն բոլորիս սիրելի ու յարգելի Ս. Երուսաղէմի Երանաշնորհ Տ. Թորգոմ Ս. Պատրիարք Հայրը:

Գոհութիւն եւ փառք Ամենակալին Աստուծոյ, որ սուզի բողով ծածկուած Առաքելական Ս. Աթոռը իր վրայէն թօթափեց սուզի տրտմութիւնը, Իր գիւնտրեալ միաբանութեան անդամներուն Աստուծոյ Ս. Հոգւոյն առաջնորդութեան ապաւինելով կատարած ընտրութեամբ: Այսօր Ս. Աթոռը ունի իր նոր գահակալը, յանձին Ն.Ա.Տ. Նուրիան Ս. Արքեպիսկոպոսի: Մենք ի բոլոր սրտէ բարձրադաղակ կը գոչենք. "Արժան եւ իրաւ": Որովհետեւ Հայ եկեղեցւոյ առօրեային հետ հետաքրքիր ամէն ազգայինի համար ծանօթ է Նորին Ամենապատուութեան որպէս Լուսարարապետ կատարած անձնօրի ծառայութիւնը յատկապէս Երանաշնորհ Պատրիարք Հօր հիւանդութեան շրջանին: Միաբանական իր ուխտին գիտակցութեամբ, ծառայեց եւ գործեց, քանաց միշտ բարձր պահել Ս. Յակոբեանց Վանքին ու Պատրիարքական Աթոռին վարկը, բնականաբար իր կողքին ունենալով ուխտապահ միաբան հայրերը, իրենց անսակարկ նուիրումով:

Ս. Երուսաղէմի Պատրիարքական Աթոռի պատմութիւնը նոյնինքն գոհողութեամբ տարուած ծառայութեան ու նուիրումի մը պատմութիւնն է: Հակառակ դարերու ընթացքին



Պատրիարքական Ընդհ. Փոխանորդ՝ Գերշ. Տ. Արամ Արք.
Աթէշեան կը կարդայ յանուն Կոստանդնուպոլսոյ
Պատրիարքութեան շնորհաւորական խօսքը:



Պատրիարք Սրբազան Հայրը կը կարդայ իր Ուխտի Քարոզը:

ապրումս ենդութեանց, դժուարութեանց, մեր ժողովուրդի ազնի գաւակները գիտցած են գնահատել մեր այս պատմական վանքը եւ Պատրիարքական Աթոռը: Ս. Երուսաղէմի բարերը կը խօսին, պատմելով մեր ժողովուրդի նուիրաբերումները: Իւրաքանչիւր ուխտաւոր, մօտէն կամ հեռուէն գիտցած է իր լուսման ու ճակտին քրտիկները հոսեցնել մեր այս հոգեւոր անդաստանին ուռճացման համար: Եւ ինչո՞ւ չէ Պոլսոյ Պատրիարքական Աթոռը եւս, ուխտաւոր ու նուիրատու ժողովուրդին առընթեր, եղբայրական անխզելի կապով, միացած է Երուսաղէմի Ս. Աթոռին, նուիրականացած երանաշնորհ երկու պատրիարքներու՝ Պոլսոյ Յովհաննէս Կոլոտ Բաղիշեցիի եւ Երուսաղէմի Գրիգոր Շղթայակիի Պատրիարքի օրհնութիւններով:

Երանաշնորհ Եղիշէ Պատրիարք Դուրեանի, Թորգոմ Պատրիարք Գուշակեանի շնորհիւ, Ս. Երուսաղէմի Ժառանգաւորաց Վարժարանին երդիքին տակ թեւածած է Արմաշու երբեմնի Դպրեվանքին ոգին, որուն ներկայութիւնը այլ խորհրդանշական կապ մըն է Ս. Երուսաղէմի եւ Պոլսոյ Պատրիարքական Աթոռներու միջեւ: Մենք մեր աշակերտութեան շրջանին շնչած ենք Ս. Երուսաղէմի այդ մաքուր մթնոլորտը, զգացած ենք, թէ զոյգ Աթոռները որքան սրտամօտիկ եղած են իրարու: Եւ այդ սրտամօտիկութիւնը չէ՛ միթէ որ ստեղծած է առողջ գործակցութեան միջոցաւորը անցեալին, որ կը շարունակուի ներկայիս ու պիտի շարունակուի ընդմիշտ: Ս. Երուսաղէմի եւ Պոլսոյ համար անյեղի ճշմարտութիւն է, թէ Հայ Եկեղեցւոյ Նուիրապետական այս երկու Աթոռները, իրարու նկատմամբ ունեցած գորակցութեան մէջ գտած են իրենց գոյութեան կոտանք:

Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայր,

Այս նուիրական պահուն, Ձերդ Ամենապատուութիւնը կը հաւաստիացնենք, թէ մենք ի բոլոր սրտէ պիտի աղօթակցինք Ս. Աթոռի ողջ միաբանութեան: Ս. Աթոռի միաբանութիւնը իր վստահութիւնը յայտնեց Ձերդ Ամենապատուութեան անձին նկատմամբ: Մենք վստահ ենք, թէ Դուք արժանի էիք այդ վստահութեան եւ Մենք եւս կու գանք յայտնել մեր վստահութիւնը, նախ որպէս երբեմնի աշակերտը այս նուիրական յարկին, ապա որպէս Պատրիարքական Ընդհանուր Փոխանորդ թարգման հանդիսանալով մեր Աթոռի հոգեւոր դասուն: Այսօր Ձեր ձեռքը դրած էք մաճին վրայ: Երբ ըստ նախընթացի պիտի շարունակէք տէր կանգնիլ մեր սրբատեղեաց անգին իրաւունքներուն, վստահ եղէք, թէ առանձին չէք: Սրբատեղիներու սեպհականատէրը՝ Հայ Ժողովուրդը, յատկապէս աղօթասէր ու աղօթանուէր հաւատացեալները Ձեր կողքին են, իրենց սրտի բարի մաղթանքներով: Վստահ ենք, թէ Ձեր ամբարած վարչական փորձառութիւնը, նաեւ ամենակենսականը՝ որ է Քրիստոսակոխ Սուրբ Վայրերու ինքնաբուրդի օրհնութիւնը, պիտի դիրացնեն Ձեր պաշտօնավարութիւնը: Ի բոլոր սրտէ կը մաղթենք, որ Ձեր հովուապետական մականը մնայ ծաղկեալ: Նաեւ վստահ ենք, թէ ձեր լծակիցները պիտի լսեն Ձեր ցուցմունքներուն ու պիտի հնազանդին Ձեզի, որպէսզի Դուք պաշտօնավարէք ուրախութեամբ եւ կը հաւատանք, որ «Խաղաղութեան Աստուածը, որ մեռելներէն վեր հանեց ոչխարներու մեծ հովիւը՝ մեր Տէր Յիսուսը, յաւիտենական ուխտի արիւնով, հաստատ պիտի պահէ Ձեզ բարի գործերու մէջ, որպէսզի կատարէք իր կամքը: Եւ մեր մէջ պիտի կատարէ Իրեն հաճելի եղող բաները Յիսուս Քրիստոսի միջոցով, որուն փառք յաւիտենաւ. Ամէն»:

Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայր,

Յանուն Կոստանդնուպոլսոյ Պատրիարքական Աթոռին, Պատկառելի Կրօնական Ժողովին, Հոգեւորականաց Դասուն, համայնքային եւ թաղային մարմիններու վարիչներուն ու մեր հաւատացեալ ժողովուրդին, կու գանք սրտազինս շնորհաւորել Ձերդ Ամենապատուութիւնը եւ Սրբոց Յակոբեանց Միաբանութեան ուխտապահ անդամները: Կ'աղօթենք, որ մեր Երկնաւոր Հայրը անսասան պահէ Հայաստանեայց Առաքելական



Գահակալ Պատրիարք Սրբազան Հայրը Տեառնեղբոր պատուանդանին վրայ:



Խոնարհութիւն եւ Աջահամբոյր:

Եկեղեցին: Սրբոց Յակոբեանց Առաքելական Աթոռին պարգևէ շինութիւն եւ պայծառութիւն: Դարձեալ մեր աղօթքն է, որ Տէր Աստուծոյ անսպառելի շնորհներով օծուն, առատաբեր նոր մշակներ անպակաս ըլլան Սրբոց Յակոբեանց Վանքի նուիրական երդիրին տակ, ի փառս Աստուծոյ, ի շինութիւն Առաքելական Ս. Աթոռոյն Երուսաղիմայ եւ ի մխիթարութիւն ու հոգեւոր շինութիւն մերազն հաւատացելոց:

Արամ Արքեպիսկոպոս Աթէշեան

Պատրիարքական Ընդհ. Փոխանորդ

Շնորհաւորական Խօսքերէն ետք, Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայրը ընթերցեց իր շնորհակալական խօսքը հայերէն որ դրուած է փոխան խմբագրականի, ստորեւ կուտանք անգլերէնով արտասանած Ուխտի Քարոզը:

“O Lord, thou art my God. I will exalt thee, I will praise thy name. Your works are wonderful; your counsels are faithfulness and truth” (Isaiah 25:1-2).

Today I approach the Throne of St. James for the first time, with these words on my lips, and in my heart. They are the words of the prophet Isaiah: a man of this city, a prophet of his people; but above all, a servant of God. And in the same spirit of humility, of gratitude and love, I accept the decision of my brothers, and the will of God to receive His blessing as the 97th Armenian Patriarch of Jerusalem.

My life’s journey, in every important respect, began here in the city of Jerusalem 42 years ago. And as I assume this lofty office, I realize that it is here that my journey will end. Since the days of the first Armenian patriarch, Abraham, fourteen centuries ago, ninety-six other churchmen have been called to sit on this throne; and as I take up my place among that great company, I feel woefully unworthy – yet strengthened by their example.

I pray to my great predecessors to magnify whatever poor virtues I possess, to help me carry this burden with honor and dignity. And I beseech all of you here – my brothers; my fellow churchmen and religious leaders; distinguished friends and witnesses from around the world; my beloved Armenians, and all the people of this holy city – I ask you to lend me your support and good will, as I offer whatever remaining days God has given me to preserve and defend the Armenian Patriarchate, and advance its age-old mission of promoting the peace and harmony among all the people of God’s holy city.

I began these remarks by invoking the words of the prophet Isaiah; and his spiritual presence over our gathering is very meaningful to me. For myself, speaking now as the representative of fourteen hundred years of history at the Armenian Patriarchate of Jerusalem, I can say, with conviction: I know how he must have felt. And I am deeply aware that every one of us here can say the

same thing. For like Isaiah, we are all people of Jerusalem. Many of us, whether as individuals or as peoples, have spent time apart from the city; yet we have always held a longing to return.

That is because Jerusalem is our home. In a city that measures its age in thousands of years, many people can rightly call it home. It is our home because the bones of our heroes, our martyrs, our precious ancestors, all reside here. Those are the priceless treasures we could never take away with us, when we were uprooted and exiled. Those are the fertile roots we all cultivate, in our distinctive ways, to bring beauty and nourishment to our present-day lives.

Yet just as he loved God, so too did the prophet love Jerusalem: with all his heart, all his mind, all his soul. At once he could rebuke his countrymen, invoking God's justice in the stern voice of the Almighty: "*I will turn my eyes away from you. When you pray, I will not hear*" (Is 1:15). This is the voice that echoes around us on this day. And I pray that I—and we—will be granted the wisdom, and the courage, to attend to that voice. For it tells us to place reason above rebuke; peace above pride. Surely, in the eyes of God's perfect justice, we all stand accused, and indicted. And yet, as the prophet assures us, God Himself is willing to set aside His own just claims—in order to listen to us. He invites us to open our hearts to Him, and to each other, so that we may reason, together, alongside our heavenly Father.

Today, as I take up the pastoral staff of the Armenian Patriarchate—as I take my first, humble step into a legacy that spans the centuries—I am moved by the conviction that the greatest achievement of my own people is not the dead kingdoms we once held, but the vital ideas that sustained our spirit, and inspired us to "reason together."

Those ideas had their birthplace in Jerusalem. And all of us who share this city today are equal heirs to them. Each of us honors that precious inheritance in our own way. For us, it means living in accordance with the example of our Lord and Savior, Jesus Christ. For others among you, it means attending to the divinely-inspired words of your holy prophets.

For all of us, our heavenly Father calls upon us to step outside of ourselves, and to "reason together," with Him, in a spirit of brotherly love, generosity, harmony, and friendship.

From such reasoning, I pray, it will be given to us to witness—together—the victory which, in Isaiah's words, would "swallow up death," and "wipe away every tear." Not a victory of pride or possession, but a moral victory: a victory of the spirit. A victory to be shared by all, equally and in peace.

That is the profound, divine idea that has always stood behind the holy city of Jerusalem. And it is the idea that our beloved, holy Jerusalem still calls us to embrace today.

In the name of our Lord Jesus Christ, I greet you from the Throne of St. James, as the 97th Armenian Patriarch of Jerusalem. I convey my deep sense of honor and gratitude to the many distinguished figures from the governments of the region, from the diplomatic corps, to our fellow religious leaders and special thanks to so many local friends and also those who arrived from overseas.

With the help of our Lord Jesus Christ and the Patron Saints of our Brotherhood, we will fulfill our age-old mission for the glory of God and His Church. May the Almighty God bless you all, along with all the people you represent. And may He shine His Divine love and mercy on all His children, now and forever. Amen.

Իր խօսքն աւարտելէ ետք, Սրբազան Պատրիարքը իջաւ բեմէն, առաջնորդութեամբ եպիսկոպոսներու, եւ խոնարհութեամբ յարգանք ընծայելէ ետք Տեառնեղբայր Առաքելոյն Ս. Աթոռին, Ասան ի ձեռին՝ բարձրացաւ անոր պատուանդանին վրայ, իբրեւ լրումն ու պսակը գահակալութեան արարողութեան:

Միաբանութեան անդամներ, գոյգ գոյգ, խոնարհեցան եւ համբուրեցին Աջը Սրբազան Պատրիարք Հօր:

Աջահամբոյրէն վերջ, թափօրով Պատրիարք Սրբազան Հայրը բարձրացաւ Պատրիարքարան: Հիւրասիրութիւն տեղի ունեցաւ յարանուանութեանց պետերուն եւ դիւանագիտական ներկայացուցիչներուն համար:





Շտրիաւորութիւններ ի Պատրիարքարան:



Հիրասիրութենէն տեսարան մը:

ՇՆՈՐՀԱԻՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳՐԵՐ ՆՈՐԸՆՏԻՐ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԱՌԹԻԻ

Գերշ. Տ. Նուրհան Արք. Մանուկեանի Պատրիարքի Գահակալութեան առթիւ հասած են բազմաթիւ շնորհատրական նամակներ, որոնց Սուրբ Աթոռոյ Դիւանը պատշաճօրէն պատասխանած է անյապաղ:

Սրբոց Յակոբեանց Առաքելական Ուխտը կը յայտնէ իր սրտագին շնորհակալութիւնը, իր Պետին՝ Նորընտիր Պատրիարքին նկատմամբ ցոյց տրուած բարեմաղթութեանց համար:

Ներքեւ կը ներկայացնենք մնացեալ Շնորհատրական նամակներու ցանկը:

ՀԱՅԱՍՏԱՆԷՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Հայոց, Մայր Աթոռ Ս. Էջմիածին:

ԼԻԲԱՆԱՆԷՆ

Մեծի Տանն Կիլիկիոյ Վեհափառ Հայրապետ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս, Անթիլիաս:

ԹՈՒՐԿԻԱՅԷՆ

Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքութեան Պատրիարքական Ընդհ. Փոխանորդ՝ Բարձրաշնորհ Տ. Արամ Արք. Աթէշեան, Իսթանպուլ:

ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԷՆ

Appeal of Conscience Foundation, President Rabbi Arthur Schneier, New York.

ՊՐԱԶԻԷՆ

Պրագիլահայոց Առաջնորդ եւ Միաբան Ս. Աթոռոյ՝ Գերշ. Տ. Տաթև Արք. Ղարիպեան, Սան Փաուլօ:

ՀՆԴԿԱՍՏԱՆԷՆ

Զաւէն Արք. Եագիչեան, Հնդկահայոց Հոգեւոր Հովիւ, Կալկաթա:



ԱՄԵՆԱՊԱՏԻՒ Տ. ՆՈՒՐԱՆ ԱՐՔ. ՄԱՆՈՒԿԵԱՆԻ ԳԱՅԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԱՌԹԻ

Գրեց՝ Նահապետ Մելքոնեան

«Երանի՛ այն ժողովուրդին, որ իր կեանքի ամենն էմ յուսահատական եւ ձգձաժամային մէկ թուականին, կրնայ ծնիլ մտքի ու սրտի ստույգ արժամիքներով հզօր հոգիներու հալլ մը, որ կարենայ ժողովի ցեղին յոյժն մասնակցեցնել, իսպառսպառ ջնջուլէ փրկելու համար ազգին ապագան»:

Բնարանը մերը չէ:

Կր պատկանի Երուսաղէմի Երջանկայիշտակ Պատրիարքներէն, Տ. Թորգոմ Արք. Գուշակեանի:

Այսօր՝ վերոյիշեալ խօսքերէն եօթ տասնամեակ ետք, Երուսաղէմի Սուրբ Աթոռին գահին վրայ կր բարձրանայ նորընտիր Պատրիարք Ամենապատիւ Տ. Նուրճան Արք. Մանուկեանը, որպէս 37րդ գահակալը Սրբոց Յակոբեանց Ուխտին: Նոյն գահին վրայ... ուր տասնամեակներ առջ ընկած էին բազմաթիւ եռամեծար Պատրիարքներ, Գրիգոր Շղթայակիր, Եղիշէ Արք. Դուրեան, Գուշակեան...:

Ամենապատիւ Տ. Նուրճան Պատրիարքի շրջանը կր սկսի այնպիսի պահու մը, երբ առանց ծանօտելու մեր բառերը, բանք, որ Հայց. Առաքելական Եկեղեցւոյ Հոգեւորականաց դասը կ'ապրի իր օրերու ամենէն տխուր ու բախտորոշ շրջանը, Հեռո՛ւ այն Հոգեւոր կեանքէն, զոր մեր ուղղափառ եկեղեցականութիւնը ապրեցաւ... Հեռո՛ւ Հաւատքի այն վկաններէն ու մարտիրոսներէն, որոնք պատկը Հիւսեցին մեր առաքելական Հաւատքին:

Նիւթականացած այս աշխարհին մէջ, արդիական մտածելակերպի Հետամուտ ըլլալու նախաձեռնութեամբ, ժամանակին Հետ քայլ պահելու նեղմտութեամբ, մարդիկ ո՛չ միայն սկսած են Հեռանալ «Աւետարանի ճամբէն», այլ սկսած են պարպուիլ եկեղեցւոյ ուղղափառ Հաւատքէն, կեանքէն եւ շնորհքէն Հոգեւոր:

Երջ. Գուշակեան Պատրիարքի անցեալի խորիմաստ խօսքը, այսօր ամէն ժամանակներէ աւելի խօսուն է՝, այժմէական է՝ եւ մանաւանդ պատգամ մըն է մեր ժողո-

վուրդին եւ ղեկավարութեան, Հոգեւորական թէ՛ աշխարհական:

Այո՛, այսօր... երբ պատեհապաշտ մարդիկ թեթեւօրէն, ազատամտութեամբ եւ ծանծաղամտութեամբ կր նային մեր եկեղեցւոյ եւ Հաւատքին ուղղափառ:

Երբ «չար Հոգիներ» գեղարդի նոր Հարուածներով կր փորձեն վիրաւորել եկեղեցին եւ քանդել «ներքին տաճարը» Հաւատացեալին:

Ու ահա այս «յուսահատական եւ ճգնաժամային» օրերուն, կամօքն Աստուծոյ, Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Նուիրապետական մէկ կարեւոր Սուրբ Աթոռին վրայ կր բարձրանայ Ամեն. Տ. Նուրճան Պատրիարքը:

Մէկը, որ աւելի քան քառասնամեակ մը ծառայած է «Աւետարանի Դաշտին»:

Հոգեւորական մը, որ տասնեւՀինգ տարի եղած է Լուսարարապետը Սուրբ Աթոռին:

Վարդապետ մը, որ եղած է ուսուցիչ, Հովիւ եւ տեսուչ ծառայելով Երուսաղէմի պատրիարքութեան եւ պիւնոքի Հայց. Եկեղեցւոյ կարիքներուն:

Կասկած չունինք, որ Ամենապատիւ Պատրիարք Հայրը ո՛չ միայն քաջածանօթ է Պատրիարքութեան դիմագրաւած բոլոր դժուարութիւններուն, այլ նաեւ Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ առջեւ ծառայած Հարցերուն:

Կր Հաւատանք, որ ան այս օրերուն գահ շրարձանար «Թագաւորելու ի վերայ աւերակաց», այլ աստուածնչեան այն խօսքով ու Հաւատքով, որ «Աստուած կարող է այս քարերէն Արրահամու որդիներ յարուցանել»: Բայց ինչպէս ըսուած է, որ Հարկ է «Պողոս տնկէ» եւ «Ապօղոս ջուր տայ», որպէսզի «Աստուած անեցնէ»: Այլ խօսքով՝ «Ան, որ կր մշակէ իր Հողը, պիտի յագենայ Հացով», (Առակաց, 12:11):

Սուրբ Աւետարանի այս ճշմարտութեամբ է, որ մեր եկեղեցին պայծառացաւ թր կեանքի ամենն էմ յուսահատական եւ ձգձաժամային մէկ թուականին, ուր ծնունդ

առիմ մտքի ու սրտի ստոյգ արժամիքներով հզօր հոգիներու հոյլ վր», վարդապետները թարգմանչաց, տակաւին սուրբեր եռամեծար՝ Նարեկացին, Շնորհալին ու Տաթեւացին, երուսաղէմի պարագային Պատրիարքը Շղթայակիր, Գուրեանը շինարար եւ Գուշակեանը սքանչելի ...:

Որքան ալ մեր եկեղեցականութեան մէջ մեծ պարսպութիւն մը կը զգացուի յաճախ, սակայն կը Հաւատանք, որ Աստուած իր ընտրեալները կը կոչէ ու կը պայծառացնէ իր Տունը:

Այսօր, Պատրիարք Հօր Գահակալութեան առթիւ, այդ Հաւատքով է որ կը գրուին այս տողերը, երբ Պատրիարք Հայրը, որպէս առաջին սպասատրը Սուրբ Աթոռին՝ Ս. Յակոբայ Տեառնեղօր Սուրբ Սեղանին առջեւ ծնկաչոք պիտի ուխտէ, «զանձն իւր զնել ի վերայ ոչխարաց», իր շուրջ Համախմբելով գիտակից ուժեր, «մշակելու Համար Հողը» դարաւոր պատրիարքութեան... պայծառացնելու Սուրբ Աթոռը եւ առաջնորդելու Հօտը Ս. Եկեղեցւոյ:

Որքան ալ ծանօթ ենք պատրիարքութեան օրակարգին վրայ լեռնացող բազմաթիւ Հարցերուն, կ'ըմբռնենք ու կը Հասկնանք, թէ մոզական դաւազան գոյութիւն չունի դժուարութիւնները գրչի մէկ Հարուածով լուծելու: Սակայն ունինք Հաւատքը, որ երբ «Պօղոս տնկէ» ու «Ապօղոս ջուր տայ», Աստուած կ'ածեցնէ ցանքը՝ Պօղոսին:

Մեզի կը մնայ բոլորուիլ մեր Ամենապատիւ Պատրիարք Հօր շուրջ, Համերաշխ Համագործակցութեամբ աշխատիլ, զօրավիզ ըլլալ Սուրբ Աթոռին, որպէսզի Տէրը անեցնէ ու պայծառացնէ Սուրբ Աթոռը Քրտի ու սրտի ստոյգ արժամիքներով հզօր հոգիներու հոյլով:


Վերջապէս...

«Հաւատքը վարդապետութեան մը մասին կամ տեսական ճշմարտութեան մը Հանդէպ զգացուած իմացական յարումի մը վիճակը չէ, այլ անձնատրական միացումը կրօնքին առարկային, այսինքն Աստուծոյ Հետ, այնպիսի կերպով մը, որ Աստուծոյ եւ մարդուն էութիւնները գայացապէս միանան իրարու, եւ խառնուին իրարու Հետ, ինչպէս Ֆիզիքական կարգին մէջ կերակուրը եւ զայն ընդունող մարմինը իւրացումի գործողութեամբ կը սուզուին իրարու Հետ»:

Երջ. Գուշակեան Պատրիարքի վարդապետութեան այս Հաւատքն է, որ կը մաղթենք որ ապրի եւ շնչէ պատրիարքութեան այս նոր շրջանէն ներս, եւ պատմութիւնը բարի օր մըն ալ լուսաշող էջեր արձանագրէ Երուսաղէմի պատրիարքութեան տարեգրութեանց մէջ, որպէս «ՆուրՀանական շրջան»:

Մինչ այդ՝

Աստուած օգնական եւ պահպան ըլլայ Սուրբ Աթոռին եւ անոր գահակալին:



ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹԻՒՆԸ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է

Այս օրերուս եկեղեցական կարգապահութիւնը դժբախտաբար շատերու կողմէ սխալ – չըսելու համար գլխիվայր – ըմբռնուած, եւ ոմանց կողմէ նոյնիսկ անտեսուած իրականութիւն մըն է:

Կարգապահութիւնը բոլոր հաստատութիւններու, ընկերութիւններու եւ կազմակերպութիւններու գոյութեան եւ հետեւաբար յաջողութեան նախապայմաններէն մին է, որ տուեալ հաստատութեան կամ կազմակերպութեան **կուռք-սկզբունքն** է, որ ամբողջին օգտին համար եղած ու դրուած շարք մըն է օրէնքներու, նպատակ ունենալով հաւաքակաւութիւնը, որոշ խումբ մը մարդոց:

Եկեղեցին եւս, եթէ ոչ մարդկային, սակայն մարդոցմէ կազմուած հաստատութիւն մըն է, որ կը ծառայէ որոշ նպատակի մը, ըլլալով անհատներու խմբաւորում, այսինքն հաւատացեալներու ժողով, իր կարգին կ'ենթադրէ եւ ունի կարգապահութեան իր պահանջները: Ընդգծեալ «ոչ մարդկային»-ի հանգամանքը կ'առանձնացնէ Եկեղեցին ուրիշ հաստատութիւններէ եւ կազմակերպութիւններէ եւ զայն կը գետեղէ իւրայատուկ խմբաւորումի մը ներքեւ: Այո՛, Եկեղեցին աստուածային հաստատութիւն մըն է, որուն զլուխն է Քրիստոս (Եփ. Ա:22-23): Ան Հայր Աստուծոյ տունն է, եւ անոր պատճառն ու նպատակը աստուածային են միանգամայն: Պատճառը Աստուծոյ անսահման սէրն է, ու նպատակը մարդուն սրբացումն ու մերձեցումը Աստուծոյ:

Հետեւաբար այս ցոյց կու տայ թէ եկեղեցական կարգապահութիւնը տարբեր է աշխարհի միւս կազմակերպութիւններէն: Անշուշտ կարգապահութեան պետք չէ նայիլ մարդկային հնարքի կամ գիտի մը. եկեղեցական կարգապահութեամբ մենք մարդկային շահը չէ որ կը հետապնդենք, այլ միայն եկեղեցոյ, եւ որուն ընդմէջէն՝ Աստուծոյ:

Անշուշտ Եկեղեցոյ կառավարութեան ուղղութիւնը ի վերուստ է, երկնային է, բացի տնտեսա-նիւթական գործառնութիւններէ: Երբ Եկեղեցոյ պաշտօնեան կատարելապէս զիտակից է իր կոչման եւ սպասաւորութեան դաշտին կը նշանակէ թէ արժանաւոր գործիքն է Աստուծոյ կամքին, Պօղոս Առաքեալին իսկ բառերով, «Անոնք որոնց Աստուած դրաւ Եկեղեցոյ սպասաւորութեան» (Ա. Կորն. ԺԲ:28): Ձեռնադրութեամբ տրուած ահա այդ տուչութիւնն է, որ Եկեղեցոյ պաշտօնեային վրայ կը դնէ զանազան պարտաւորութիւններ. եթէ մէկ կողմէն հրամայելու՝ միւս կողմէն սակայն հնազանդելու: Եւ այս կը վերաբերի ստորադաս եւ գերադաս պաշտօնեաներու հաւասարապէս: Եւ ճիշդ այս պարտաւորութիւններու անգիտութիւնը կամ անտեսումը, երբեմն նոյնիսկ թեմակալ առաջնորդներէ մինչեւ հոգեւոր հովիւները (կուսակրօն թէ ամուսնացեալ), եկեղեցոյ անդամներն ու պաշտօնեաները կ'անդամալուծէ եւ կը տառապեցնէ Եկեղեցին:

Մեր եկեղեցա-կրօնական կեանքէն ներս չենք կրնար անկարգապահութիւնը նկատել իբր ցեղային թերութիւն կամ զայն վերագրել ազգային նկարագրի պակասութեան, ոչ իսկ հետեւանք մեր պատմութեան սարսափելի պայմաններուն, կը խորհինք թէ պարզապէս արդիւնք է քրիստոնեական կրօնքին ճշմարտութեան նկատմամբ մեր ունեցած թիր ըմբռնումին եւ կամ ինչու չէ մեր անտարբերութեան:

Սոյն գրութեամբ կու գանք շեշտելու մեր Եկեղեցոյ, ու նամանաւանդ մեր վանքէն ներս հրամայականն ու անհրաժեշտութիւնը կարգի ու կանոնի, **ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹԵԱՆ, ՀՐԱՄԱՆԻ** եւ **ՀՆԱՋԱՆԴՈՒԹԵԱՆ**, մին՝ սիրով եւ արդարութեամբ, բայց միշտ վճռական, իսկ միւսը՝ դարձեալ սիրով, հեզութեամբ եւ անձնուիրութեամբ: Կրօնա-եկեղեցական մեր կեանքին մէջ այս երկուքն ալ պարտաւորութիւններ են, որովհետեւ չենք կրնար մոռնալ

մանաւանդ՝ որ եկեղեցականութիւնը զինուորութիւն է, մանաւանդ Սրբոց Յակոբեանց Միաբանութեան անդամներուն համար:

Ներկայիս Հայաստանեայց Առաքելական Եկեղեցոյ ամենէն անհրաժեշտ պայմաններէն մէկն է ունենալ Պօղոս Առաքելի նամակներուն ոգիովը տոգորուած հրամայել գիտցող եպիսկոպոսներ, Եկեղեցոյ աւանդութեանց նախանձախնդիր կղերականներ որոնք ի պահանջել հարկին Աստուծոյ սուրբ Տունէն, Քրիստոսի նման գիտնան դուրս հանել կեղծաւորներն ու մերօրեայ փարիսեցիները:

Սակայն ասոնց կարգին մեր Առաքելական Եկեղեցին ամէն ժամանակէ աւելի կարիքը ունի իրենց գերադասներուն հնազանդիլ գիտցող զարգացած եկեղեցականներու կուսակրօս թէ ամուսնացեալ, որոնք անձուեր կերպով ծառայեն իրենց Եկեղեցոյ եւ ժողովուրդին, որոնք ըլլան անփոխարինելի գործակիցներ իրենց մեծաւորներուն, ինչպէս նաեւ բարի օրինակ հաւատացեալ ժողովուրդին:

Զարգացում, համեստութիւն եւ քաղաքավարութիւն ցանկալի բարենիշերն են Հայ հոգեւորականին, սակայն անոնցմէ աւելի պահանջուած գլխաւոր յատկութիւնն է **ՀԱՒԱՏՔԸ, ՊԱՐՏԱՃԱՆԱՀՈՒԹԻՒՆ** ու **ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹԻՒՆ**, ինչ աստիճանի վրայ ալ ըլլայ տուեալ եկեղեցականը:

Սիոն 1931

Տ.Վ.

Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր Անդրանիկ Պաշտօնական Մուտքը Բեթղեհէմ

Երկուշաբթի, 17 Յունիս 2013, առաւօտեան ժամը 9:45-ին, նորընտիր Հայոց Պատրիարքը՝ Ամենապատիւ Տ. Նուրհան Արք. Մանուկեան, Սրբոց Յակոբեանց Միաբանութեան անդամներուն հետ ուղղուեցաւ դէպի Բեթղեհէմ Սուրբ Ծննդեան Տաճար, հոն կատարելու նորընտիր Պատրիարքի տաճարէն ներս, համաձայն Սթաթուքոյի, պաշտօնական անդրանիկ մուտքը:

Պատրիարք Սրբազան Հօր եւ միաբանութեան ինքնաշարժներուն ընկերակցեցան Երուսաղէմի ոստիկանութեան մեքենաները՝ դէպի Բեթղեհէմ ճանապարհը ազատ պահելու եւ առաջնորդելու այս շքեղ երթը:

Ինքնաշարժներու թափօրը ընթացաւ աւանդական ուղիէն հասնելով Բեթղեհէմի գլխաւոր հրապարակը: Հոն կը սպասէին Բեթղեհէմի Կառավարիչը, Բեթղեհէմի եւ Պեթճալայի Քաղաքապետները եւ Հայոց Գաղութի երեսելիները: Ժամը 10:15-ին, Պատրիարք Սրբազան Հօր ինքնաշարժը հասաւ Բեթղեհէմի գլխաւոր հրապարակը, ուր եւ ողջագուրուեցաւ Պաղեստինեան Պետութեան վերոյիշեալ անձերուն հետ, ու միասնաբար, միաբանութիւն եւ ժառանգաւոր սաներ թափօր կազմած՝ «Խորհուրդ Մեծ» շարականի երգակցութեամբ ուղղուեցան դէպի Տաճարի սինազարդ գաւիթը: Տաճարի մուտքին, Սրբազան Պատրիարք Հայրը ողջագուրուեցաւ Յունաց Պատրիարքի եւ Ֆրանչիսկեան Քուսթոսի ներկայացուցիչներուն հետ, եւ թափօրը ընթացաւ դէպի տաճարի սինազարդ գաւիթը: Պատրիարք Սրբազան Հայրը, շուրջառով եւ գաւազան ի ձեռին եւ ժառանգաւոր

սաներու «Հրաշափառ»-ի երգակցութեամբ, առաջնորդուեցաւ դէպի Օննդեան Այրը՝ խնկարկելու եւ իր անդրանիկ ուխտը կատարելու: Խնկարկման եւ անդրանիկ ուխտի կատարումէն վերջ, Պատրիարք Սրբազան Հայրը կարդաց մեր Տիրոջ Յիսուսի Քրիստոսի հրաշալի ծնունդը դրուատող անտարանէն գլուխ մը, իսկ ժառանգաւոր սաներ երգեցին «Փառք ի բարձունս Աստուծոյ» գեղեցիկ փառերգութիւնը: Անտարանի ընթերցումէն ետք, Պատրիարք Սրբազան Հայրը առաջնորդուեցաւ դէպի Հայոց Բաժնի Եկեղեցին, Աւագ Խորանին առաջ, ու հոն «Ուրախ եղէ ես ոյք ասէին ցիս ի տուն Տեան երթիցուք մեք» սաղմոսը կարդաց: Սաղմոսի ընթերցումէն ետք, Պատրիարք Սրբազան Հայրը «Պահպանիչ»ով օրհնեց բովանդակ միաբանութիւնն ու ժողովուրդը: Պատրիարք Սրբազան Հօր օրհնութենէն ետք, բոլոր ներկաները առաջնորդուեցան դէպի Բեթղեհէմի Հայոց Վանուց ներքնասարահը ուր պատրաստուած էր հիւրասիրութիւն մը այս շքեղ առիթով: Նախքան հիւրասիրութիւնը, խօսք առաւ Բեթղեհէմի Հայոց Վանուց Տեսուչ՝ Հոգ. Տ. Խաղ Վրդ. Ճունտուրեան, շնորհաւորելով Պատրիարք Սրբազան Հայրը այս առիթով եւ հայցեց անոր Սուրբ Հոգոյ առաջնորդութիւնը իր առաքելութեան մէջ: Հայոց Տեսուչի խօսքէն ետք, խօսք առին Բեթղեհէմի Կառավարիչն ու Քաղաքապետը, որոնք եւս շնորհաւորութիւններ եւ բարի մաղթանքներ ըրին Պատրիարք Սրբազան Հօր անդրանիկ մուտքին այս առիթով: Ապա խօսք առաւ Պատրիարք Սրբազան Հայրը, եւ շնորհակալութիւն յայտնեց Պաղեստինեան Պետութեան Նախագահին եւ անոր ներկայացուցիչներուն, որոնք եկած էին սոյն հանդիսութեան, եւ հայցեց Աստուծմէ, որ խաղաղութիւն շնորհէ Պաղեստինեան չարչարեալ ժողովուրդին եւ պետութեան:

Հիւրասիրութենէն ետք, Պատրիարք Սրբազան Հայրը միաբանութեամբ հանդերձ վերադարձաւ Սրբոց Յակոբեանց Մայրավանք:



Ամենապատի Պատրիարք Սրբազան Հօր Անդրանիկ Պաշտօնական Մուտքը Ս. Յարութեան Տաճարէն Ներս

Չորեքշաբթի, 19 Յունիս 2013, առաւօտեան ժամը 9:00-ին, նորընտիր Հայոց Պատրիարք՝ Ամենապատի Ս. Նուրիան Սրբ. Մանուկեան, Սրբոց Յակոբեանց Միաբանութեան անդամներուն հետ ուղղուեցաւ դէպի Սուրբ Յարութեան Տաճար, կատարելու իր պաշտօնական անդրանիկ մուտքը: Ս. Տեղեաց գոյավիճակի տրամադրութեանց համաձայն, Ս. Քաղաքի երեք Պատրիարքներէն իւրաքանչիւրին իրաւունքն է պաշտօնական մուտք գործել թէ՛ Ս. Յարութեան եւ թէ՛ Ս. Ծննդեան Տաճարներէն ներս, իրենց ընտրութեան կամ գահակալութեան յաջորդող օրերուն:

Տաճարի մուտքին Պատրիարք Սրբազան Հայրը ողջագորուեցաւ Յունաց եւ Ֆրանչիսկեան Միաբանութեանց ներկայացուցիչ Տեսուչներուն հետ, որմէ անմիջապէս ետք, «Հրաշափառ» շարականի երգեցողութեամբ՝ Պատրիարք Սրբազան Հայրը խնկարկեց եւ երկրպագեց Պատանատեղոյն առաջ, որմէ ետք թափօրը ուղղուեցաւ դէպի մեր Տիրոջ Քրիստոսի Գերեզմանը, ուր «Ուրախ եղէ ես ոյք ասէին ցիս ի տուն Տեառն երթիցուք մեք» սաղմուսը կարդալէ ետք, ուխտ ու երկրպագութիւն կատարուեցաւ միաբանութեան անդամներուն կողմէ: Ուխտէն ետք, թափօրը գերեզմանին շուրջ դառնալով եկաւ Ուշաթափման սրբավայրը: Հոն Պատրիարք Սրբազան Հայրը «Պահպանիչ»ով օրհնեց բովանդակ միաբանութիւնն ու ժողովուրդը: Պատրիարք Սրբազան Հօր օրհնութենէն ետք, բոլոր ներկաները առաջնորդուեցան դէպի Հայոց Տեսչարան, ուր այս առիթով պատրաստուած էր հիւրասիրութիւն: Նախքան հիւրասիրութիւնը, Ս. Յարութեան Հայոց Տեսուչ՝ Հոգ. Տ. Մամուկ Ծ.Վրդ. Աղոյեան խօսք անելով շնորհաւորեց Պատրիարք Սրբազան Հայրը, այս առթիւ հայցելով համագործակցութիւնը միւս երկու յարանուանութիւններու տեսուչներուն, սրբատեղեաց խնդիրները համերաշխ ոգիով լուծելու համար: Ստորեւ կը ներկայացնենք Հայոց Տեսուչի հայերէն լեզուով կարդացած խօսքը:

Ամենապատի Պատրիարք Սրբազան Հայր,

Յանուն Սրբոց Յակոբեանց միաբանութեան մեր Հայրերուն եւ Հայ ժողովուրդին, փառք կու տանք Աստուծոյ որ անգամ մը եւս տուաւ մեզ առիթը շնորհաւորելու ձեզ իբրեւ նոր Պատրիարքը Հայ Երուսաղէմի:

Ի ներկայութեան եւ մասնակցութեան միւս իրաւակից յարանուանութեանց՝ Յունաց եւ Կաթողիկէ ֆրանչիսկեաններուն, այսօր կատարեցիք այս բացառիկ պաշտօնական մուտքը Սուրբ Յարութեան Տաճար, որպէս իրաւատէրերէն եւ պաշտպաններէն մին Սուրբ Երկրի դարաւոր սրբատեղիներուն, եւ ուխտեցիք Քրիստոսի Սուրբ Գերեզմանին առաջ՝ Հաւատարմօրէն շարունակել ձեր ծառայութիւնը անոնց բարեգարգման եւ զօրացման համար՝ ի փառս Աստուծոյ եւ ի փայլումն Համայն մարդկութեան, գործակից ունենալով միւս եկեղեցիներու պետերը:

Պատմութեան վկայութեամբ անհաճօղ դէպքեր եւ անհամաձայնութիւններ շատ են եղած սրբատեղեաց եկեղեցիներու միջեւ, որոնց հանդէպ Հայոց Պատրիարքութիւնը միշտ փորձած է քիստոնէական եղբայրական սիրով ի յայտ գալ խաղաղութեան եւ համերաշխութեան ոգիով՝ յանուն միասնութեան եւ համագոյակցութեան: Այդ ոգին ի յայտ

եկած եւ միշտ մղիչ ոյժ եղած է ձեր սրտին ու մտքին մէջ, որուն մենք կը մօտենանք յարգանքով:

Հարցերու բարւոյ յուժան համար անհրաժեշտ է տքնաջան աշխատանք եւ, առանց լետաձգման, կատարել քննութիւններ եւ պատրաստուիլ Status Quo-ի ժողովներուն: Ամէն բանէ առաջ, եկեղեցւոյ պետեր պէտք է ջանան ստեղծել այն համերաշխ միջնորդութիւն, ուր կարելի ըլլայ վստահիլ իրարու, որ առաջին գրաւականն է խնդիրներու վերացման եւ կամ նուազեցման:

Ըմբռններ, որ ժամանակը մեր բոլորին համար կը ներկայացնէ դժուարին կացութիւն: Եթէ կ'ուզենք ունենալ նուազ փոթորկայից կեանք, պէտք է միացնենք մեր ոյժերը: Մեզմէ ոչ մէկը առանձինն զօրաւոր կամ անզօր է, միասնաբար մենք կարող ենք ըլլալ աւելի զօրաւոր եւ կայուն, որովհետեւ երբ եկեղեցի մը կը տկարանայ ժամանակի ընթացքին, անտարակոյս կը տկարանան նաեւ միւսները:

Քրիստոնէական ապրեցնող ոգին կը գործէ եւ կը զարգանայ միասնութեան մէջ միայն, թէկուզ ունենանք սկզբունքներու որոշ տարբերութիւններ: Մեր հովիւր՝ Քրիստոս, փոխանցեց մեզի իր սէրը, խաղաղութիւնը եւ ներշնչումը Սուրբ Հոգիին: Ըլլանք հաւատարիմ, պահենք զանոնք եւ աշխատինք այդ նոյն ուղղութեամբ:

Յանուն ներկաներուն, կրկին անգամ կը շնորհաւորեմ ձեր պատրիարքական նոր պաշտօնը, եւ ձեզի կը մաղթեմ առողջութիւն, քաջութիւն եւ աստուածահաճոյ գործերու յաջողութիւն:

Ընդունեցէք մեր բոլորին սէրը եւ աջակցութիւնը: Ծնորհակալութիւն:

Հայոց Տեսուչի խօսքէն ետք, Պատրիարք Սրբազան Հայրը խօսք առաւ եւ շեշտեց համագործակցութիւնը եւ համերաշխ ոգին սրբատեղեաց մէջ, նաեւ շնորհակալութիւն յայտնեց Յունաց եւ Ֆրանչիսկեան միաբանութեանց տեսուչներուն:

Հիւրասիրութենէն ետք, Պատրիարք Սրբազան Հայրը միաբանութեամբ հանդերց վերադարձաւ Սրբոց Յակոբեանց Մայրավանք:



Քենթրոպլըրիի նորընտիր Արքեպիսկոպոսի այցելութիւնը Հայոց Պատրիարքարան

Չորեքշաբթի, 26 Յունիս 2013-ին, Հայոց Պատրիարքարան այցելեց Քենթրոպլըրիի 105-րդ նորընտիր Արքեպիսկոպոս՝ Ճասփին Ուէլլի:

Նորընտիր Արքեպիսկոպոսի ընտրութիւնը հետեւեցաւ 9 Նոյեմբեր 2012-ի Բուան Արքեպիսկոպոս Ուիլիըմգի հրաժարականէն անմիջապէս ետք: 4 Փետրուար 2013-ին, Նորին Վեհութիւն Էլիզապէթ Թագուհին վաւերացուցած եւ հաստատած էր անոր ընտրութիւնը: Իսկ 21 Մարտ 2013-ին, գահակալութեան արարողութենէն ետք, նորընտիր Արքեպիսկոպոսը ձեռնարկեց պաշտօնական այցելութիւններու, որոնցմէ մին էր Յունիսի 26-ին տեղի ունեցած այցելութիւնը Հայոց Պատրիարքարան:

Նորընտիր Արքեպիսկոպոսը դիմաորուեցաւ Վանքի Աւագ Մուտքէն եւ առաջնորդուեցաւ դէպի Պատրիարքարանի դահլիճ ուր կը սպասէր Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հայրը: Ողջագուման արարողութենէն ետք, Պատրիարք Սրբազանն ու նորընտիր Արքեպիսկոպոսը խօսեցան Սուրբ Երկրի մէջ տիրող կացութեան եւ Քրիստոնէութիւնը յուզող հարցերու մասին ընդհանրապէս եւ Սուրբիոյ պատերազմական վիճակին եւ այնտեղ գտնուող թէ Քրիստոնէայ եւ թէ այլ ժողովուրդներու նեղութեանց մասին մասնատրապէս:

Ի պատիւ նորընտիր Արքեպիսկոպոսին ընտրութեան եւ Հայոց Պատրիարքարան այցելութեան, Պատրիարք Սրբազան Հայրը հայկական խաչ մը նուիրեց եւ շնորհաւորեց անոր ընտրութիւնը եւ գահակալութիւնը, մաղթելով անոր գործոց բարեաց յաջողութիւն: Արքեպիսկոպոսը նոյնպէս նուէր յանձնեց Պատրիարք Սրբազան եւ բարեմաղթութիւններ ըրաւ Սրբոց Յակոբեանց Միաբանութեան եւ անոր պետին:

Արքեպիսկոպոսին կ'ընկերանային իր տիկինը, Երուսաղէմի Անկլիքան Եկեղեցւոյ Եպիսկոպոս՝ Սուիէլ Տաւանի եւ այլ Անկլիքան Եկեղեցականներ:

Հիւրասիրութենէն ետք, Արքեպիսկոպոսը հրաժեշտ առաւ Պատրիարք Սրբազան Հօրմէն կրկին այցելելու խոստումով:

Նորայր Վրդ. Գազազեան





Պատրիարք Սրբազան Հայրը յուշանուէր կը յանձնէ Քէնթըրպըրիի նորընտիր Արքեպիսկոպոսին:



Քէնթըրպըրիի նորընտիր Արքեպիսկոպոսը յուշանուէր կը յանձնէ Պատրիարք Սրբազան Հօր:

Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր Առաջին Պաշտօնական Այցելութիւնը Յորդանանահայութեան

Հինգշաբթի, 27 Յունիս 2013, առաւօտեան ժամը 9-ին, նորընտիր գահակալ Հայոց Պատրիարք՝ Ամենապատիւ Տ. Նուրիան Արք. Մանուկեան, Երուսաղէմէն ուղղուեցաւ դէպի Յորդանան տալու Պատրիարքական իր առաջին այցելութիւնը տեղոյն հայ գաղութին: Պատրիարք Սրբազան Հօր ընկերակցեցան Հոգեշնորհ Տ. Գուսան, Տ. Բագրատ եւ Տ. Նորայր Վարդապետները: Յորդանան մուտքին, Պատրիարք Սրբազան Հայրը դիմաւորուեցաւ Յորդանանի Պատրիարքական Փոխանորդ՝ Գերշ. Վահան Արք. Թօփալեանի կողմէ: Ըստ ծրագրին, Պատրիարք Սրբազան Հայրը Սուրբ եւ Անմահ Պատարագ մատոյց Ուրբաթ, 28 Յունիս 2013-ին, առաւօտեան ժամը 10-ին, Սուրբ Թաղէոս Եկեղեցոյն մէջ: Պատրիարք Սրբազան Հայրը, յընթացս Պատարագին, հոգեշունչ քարոզ մը խօսեցաւ խորհրդով հաւատացեալներուն, որոնք շտապած էին Սուրբ Թաղէոս Հայոց Եկեղեցի, հաղորդուելու անկէ եւ ծանօթանալու անոր: Պատարագի աւարտին, հաւատացեալներ առիթն ունեցան Պատրիարք Սրբազան Հօր աջը համբուրելու եւ ստանալու անոր օրհնութիւնը:

Պատարագէն վերջ, Տեղական Ազգ. Խորհուրդի հրաւերով, Պատրիարք Սրբազան Հայրը առաջնորդուեցաւ Յոյն Ուղղափառ Գաղութի Միութեան ճաշարանը, ուր Ազգ. Խորհուրդի անդամներ ճաշեցին Սրբազան Պատրիարք Հօր հետ եւ վայելեցին անոր մտերմութիւնը: Երեկոյեան ժամը 7-ին, Պատրիարք Սրբազան Հայրը ընդունուեցաւ ՀՄԸՄ-ի սրահին մէջ, Յորդանանահայ Գաղութին կողմէ կազմակերպուած հիւրասիրութեամբ մը: ՀՄԸՄ-ի սրահի մուտքին, սկառուտներ թմբկահարութեամբ դիմաւորեցին Պատրիարք Սրբազան Հայրը եւ Ազգ. Խորհուրդի անդամներ առաջնորդեցին զինք սրահէն ներս: Նախքան հիւրասիրութիւնը, Պր. Ներսէս Ներսէսեան «Բարի Գալուստ»ի խօսք ընելով բարեմասնեց Պատրիարք Սրբազան Հայրն ու ներկայացուց գաղութին ակնկալած բարենպաստակ ծրագիրներն ու միտքերը: «Բարի Գալուստ»ի խօսքէն վերջ, անակնկալ մը պատրաստուած էր Ազգ. Խորհուրդին կողմէ, «Ասա» մը, գաւազան մը որ իբր նուէր յանձնուեցաւ Գերշ. Տ. Վահան Արք. Թօփալեանի կողմէ: Գաւազանի յանձնումէն ետք, խօսք առաւ ՀՄԸՄ-ի Ատենապետը, որ նոյնպէս «Բարի Գալուստ» մաղթելով շնորհաւորեց Պատրիարք Սրբազան Հօր ընտրութիւնն ու գահակալութիւնը, եւ յանուն տեղական Միութիւններուն՝ յաղճապակիէ պատրաստուած պատկեր մը յանձնուեցաւ իբրեւ յուշանուէր:


Պատրիարք Սրբազան Հայրը խօսք առաւ եւ շնորհակալութիւն յայտնեց Գերշ. Տ. Վահան Արք. Թօփալեանին, Տեղական Ազգ. Խորհուրդին եւ բոլոր միութիւններու վարչութիւններուն եւ անդամներուն, իրենց տարած աշխատանքին եւ նուէրներուն համար: Պատրիարք Սրբազան Հայրը իր խօսքին մէջ շեշտեց համագործակցութեան գաղափարը եւ

թէ միասնական աշխատանքի արդիւնքները իրենց բարերար օգուտը ունին ի շահ մեր գաղութին, որ ի Յորդանան, Երուսաղէմ, եւ թէ միայն միասնական աշխատանքով համախմբուած Հայց. Առաք. Եկեղեցւոյ շուրջ կարելի է խմբուելով կարելի է գաղութի ապագան բարձունքներ առաջնորդել:

Պատրիարք Սրբազան Հօր խօսքէն վերջ, Պատրիարք Սրբազան Հայրը եւ բոլոր ներկաները հիւրասիրուեցան համադամ ուտելիքներով եւ ըմպելիներով, սիրոյ եւ միասնութեան մթնոլորտի մը մէջ:

Ներկաներէն շատեր Պատրիարք Սրբազան Հօր մօտենալով առին անոր աջն ու օրհնութիւնը: Երեկոյեան ժամը 9:30-ին, Պատրիարք Սրբազան Հայրը եւ իրեն ընկերակցող հոգեւորականները ուղղուեցան դէպի հիւրանոց հանգստանալու եւ պատրաստուելու յաջորդ օրուան Երուսաղէմ վերադարձին:

Շաբաթ, 29 Յունիս 2013-ին, առաւօտեան ժամը 8:30-ին, Պատրիարք Սրբազան Հայրը իրեն ընկերակցող հոգեւորականներուն հետ վերադարձաւ Մայրավանք: Մինչեւ Յորդանանի «Ալլէնպի» սահմանագլուխ՝ Պատրիարք Սրբազան Հօր ընկերակցեցաւ Պատր. Փոխանորդ՝ Գերշ. Տ. Վահան Արք. Թօփալեան:



Պատարագիչ Պատրիարք Սրբազան Հայրը՝ Քարոզի պահուն:

ԱՄԵՆ. ՏԷՐ ՆՈՒՐՀԱՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՍՐԲԱԶԱՆ ՀՕՐ ԱՆԴՐԱՆԻԿ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ ՅՈՐԴԱՆԱՆ

Պատմական կարեւոր անդրադարձ ունեցաւ Ամեն. Տ. Նուրհան Արք. Մանուկեանի այցելութիւնը Յորդանան Ուրբաթ, 28 Յունիս 2013-ին:

Բոլոր Յորդանանահայերը մեծ խանդավառութեամբ եւ գրկաբաց ընդունեցին Երուսաղէմահայոց եւ Յորդանանահայոց Պատրիարք Հօր գալուստը ի Յորդանան:

Նոյն օրը, Պատրիարք Սրբազան Հօր կողմէ մատուցուած Պատարագը իր խորհրդաւորութեամբ ոգեշնչեց եւ առինքնեց Ս. Թաղէս Տաճարի խոսներամ հաւատացեալներու բազմութիւնը:

Երուսաղէմէն Պատրիարք Սրբազան Հօր հետ Ամման ժամանած Հոգեւորականաց դասը՝ բաղկացած Հոգշ. Հայրեր Գուսան Վրդ. Ալճանեանէ, Բագրատ Վրդ. Պուրճէքեանէ եւ Նորայր Վրդ. Գազազեանէ, Ամմանահայ Գաղութի Դպրաց Դասի հետ, որոնց մաս կը կազմէր Ամմանահայ Գաղութի Հոգեւոր Հովիւ՝ Հոգշ. Տէր Հայկազուն Վրդ. Եղիայեան, շքեղ պատարագով մը պանծացուցին Ս. Թաղէս Տաճարն ու ցնծութիւն լեցուցին հաւատացեալներու հոգիները: Պատարագի ընթացքին, Պատրիարք Սրբազան Հօր Քարոզը ներշնչեց բոլոր բարեպաշտ հաւատացեալները:

Հոս կ'արժէ նշել, որ Ս. Պատարագին ներկաները, սրբութիւն բուրոզ մթնոլորտէն խանդավառ, խոստովանելով իրենց մեղքերը, անխտիր հաղորդուեցան Ս. Սկիհէն:

Ամեն. Պատրիարք Սրբազան Հօր ի պատիւ կազմակերպուած ընդունելութիւնը տեղի ունեցաւ նոյն օրը, Ուրբաթ երեկոյեան, շԱՄՄ-ի Տաքէսեան Սրահին մէջ: Ընդունելութեան նպատակն էր ունկնդրել Պատրիարք Սրբազան Հօր պատգամը ուղղուած Հայ Գաղութին, ինչպէս եւ Գաղութի զգացումներն ու բարոյական ակնկալութիւնները փոխանցել կամ հաղորդել իրեն:

Ընդունելութիւնը ծրագրուած եւ կազմակերպուած էր Գաղութիա Բարեխնամ Առաջնորդ, Գերշ. Տէր Վահան Արք. Թօփալեանի աշխատանքներով, եւ գործադրուեցաւ Ազգային Տեղ. Խորհրդի ժրաջան անդամներուն կողմէ:

Սոյն աննախընթաց միջոցառումը ունեցաւ իր հանդիսաւոր եւ ընկերային բաժինները: Պաշտօնական բաժնին մէջ հետեւեալ բարի գալուստի խօսքը ընթերցուեցաւ Ազգ. Տեղ. Խորհրդի Քարտուղար, ԱՄՄ-ի եւ ՌԱԿ Վահան Թէքէեան Մշակութային Միութեան Ատենապետ Ներսէս Ներսէսեանի կողմէ:

Ամեն. Պատրիարք Սրբազան Հայր,

Գերշ. Եւ Հոգեշ. Հայրեր,

Համեստափայլ Տիկնայք եւ Պատուարժան Պարոնայք Գաղութիա Ազգային Հաստատութեանց, սիրելի հարազատներ,



Յորդանանահայոց Հոգևոր Առաջնորդ՝ Վահան Արք. Թովալեան
Ասան կը յանձնէ Պատրիարք Սրբազան Հօր:



Հիւրասիրութենէն տեսարան մը:

Այս հոգեզմայլ առիթը կը շոյէ մեր ազգային հպարտութիւնը, եւ կը մղէ մեզ մեր ինքնութիւնը գովերգելու անծայրածիր հորիզոնները: Ներկայ ըլլալ այսպիսի պատմական իրադարձութեան մը, ներկայ ըլլալ հանգրուաններու փոխանցման այս ողջ իրականութեանը, կը նշանակէ իրազէկ ըլլալ եւ վայելել կեանքը իր գարթօսքի եւ վերածնունդի շօշափելի վերընթացներով:

Ամեն. Պատրիարք Սրբազան Հայր, բոլորս կը վկայենք, թէ ինչպիսի ջերմաշունչ եւ ջերմեռանդ հաղորդականութիւն կը տիրէ Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Միաբանութեան, Նուիրապետական Աթոռի եւ Ամմանահայ Գաղութի Հոգեւոր Առաջնորդարանին միջեւ:

Յորդանանահայ գաղութը միշտ ընդունած է Երուսաղէմի Պատրիարքութիւնը որպէս յենակ, որպէս աստուածակերտ փառահեղ հաստատութիւն, բնութեան կողմէ ողջ հայութեան նուիրուած հոգեպարար եւ հոգեծարաւը յազեցնող սրբաղբիւր: Եւ ի գուր տեղը չէ որ Նախախնամութեան կամքը, Նախախնամութեան հովանին իր հաւանութիւնը տուած է որ Երուսաղէմի սրբատեղիներու առեղծուածային կառոյցներու եւ համակարգի ապահովութիւնը վստահի Ձեզ, Ամեն. Պատրիարք Սրբազան Հայր:

Մենք բոլորս նկատած ենք Ձեզ որպէս խոհեմ, հեռատես եւ հաւասարա-կըշտուած անձնատրութիւն մարդկային, ընկերական եւ հասարակական կեանքի բոլոր ասպարէզներէն ներս: Դուք եղած էք տիպար եւ օրինակելի յատկանիշներով օժտուած կղերական: Կարծէք Նախախնամութիւնը կերտած էր Ձեզ այնպիսի նկարագրով, որպէսզի հանդիսանաք Հայ Ազգին, Հայ Եկեղեցիին արժանի առաջնորդներէն մին:

Ամեն. Պատրիարք Սրբազան Հայր, Ձեր ունեցած հմտութիւնը Հայ մշակոյթի, արուեստի, գրականութեան եւ ծիսագիտութեան ասպարէզներէն ներս, ինքնին կը հրահրէ եւ կը պարտադրէ մեզ սքանչանալ մեր ողջ եւ շօշափելի հարստութիւններով:

Անկասկած որ անծայրածիր գոհունակութեամբ տոգորուած էր Գաղութիս Հոգեւոր Առաջնորդ Գերշ. Տ. Վահան Արք.ի ցնծութիւնը Ձեր արժանատր Պատրիարք ընտրուելու պանծալի առիթով: Հաւատացէք որ միեւնոյն յաճախականութեամբ եւ երջանկութեան վառ արտայայտութիւններով լուսատրուեցան մեր հոգիները եւ լայնացան մեր հեռատեսութեան սահմանները:

Մենք բոլորս՝ Ազգային Տեղ. Խորհուրդը, Գաղութիս երեք Ազգային Կազմակերպութիւնները՝ ԱՄՄ-ը, ՀՕՄ-ը, եւ ՀՄԸՄ-ը, Վարժարանիս Տնօրէնութիւնն ու Գաղութիս բոլոր անդամները ի սրտէ կ'ողջունեն Ձեզ եւ կը ցանկան ամենալաւը: Բոլորս արդէն ընդունած ենք, հաւատացած ենք, որ Դուք կը հանդիսանաք ոչ միայն Ձերոյ Միաբանութեան անդամներու կողմէ Ընտրեալ Պատրիարք., այլ եւ Ամենատիրոջ հաւանութեան արժանացած այդ անձը, որ պիտի արժէտորէ Սրբոց Յակոբեանց Միաբանութեան Աթոռը կամ Գահը:

Այս առիթով կրկին անգամ կ'ըսենք Ձեզ բարի եկած էք, բայց միաժամանակ կը համարձակինք խնդրել Ձեզմէ, որ յաճախ այցելէք մեր Առաջնորդարանը, մեր հայկական կեդրոնները, որովհետեւ մենք բոլորս կարիքը ունինք Ձեր ջերմութեանը եւ հարազատութեանը:

Բարի եկած էք Ամեն. Պատրիարք Սրբազան Հայր:

Այս առիթը ամենայարմարը նկատուեցաւ Պատրիարք Սրբազան Հօր նուիրելու Պատրիարքական ԱՍԱՆ մը (գաւազան): Նուէրի փոխանցումը կատարուեցաւ Գաղութի Հոգեւոր Առաջնորդ Վահան Արք. Թօփալեանի ձեռամբ:

Ասայի տուչութենէն ետք Պատրիարք Սրբազան Հայրը տուաւ իր հայրական պատգամը բոլոր ներկաներուն: Նա մատնանշեց բոլոր զգայուն հարցերը, որոնք ծառայած են մեր առաջ եւ կը խոչընդոտեն մեր ազգային ինքնութիւնը պահել եւ պահպանելու ճիգերը: Ան թուաբանական եւ տրամաբանական հաշուարկներով բացատրեց թէ գաղութի մէջ գոյութիւն ունեցող բարձր կարողութեանց տէր անձնատրութիւնները ինչպիսի հսկայական արդիւնք կրնան ընձեռել՝ եթէ գործեն միասնաբար: Ան իր ունեցած լայն եւ խոհուն փորձառութեամբ մեր նորապսակ զոյգերուն համար ընդգծեց կարեւորութիւնը իրենց զաւակները հայկական վարժարան, հայկական օճախներ դրկելու, ունենալու եւ պահելու համար ամրակուր հայկական գաղութ: Ան նոյնպէս բացայայտեց Հայ Եկեղեցիի անհրաժեշտութիւնն ու դերը ի նպաստ հայապահպանման սուրբ նպատակին:

Ապա Պատրիարք Սրբազան Հայրը խոստացաւ աւելի յաճախ այցելել Յորդանան ականատես ըլլալու եւ հպարտանալու մեր արձանագրած յաջողութիւն-ներով:

Ներսէս Ներսէսեան



Հաւատացեալներ աղօթքի պահուն:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Փոխան Խմբագրականի	3
Ընտրություն Պատրիարքի Առաք. Ս. Աթոռոյն Երուսաղեմի	5
Շնորհաւորական հեռագրեր նորընտիր Պատրիարքի ընտրութեան առթիւ	11
Ընտրություն Լուսարարապետի Առաք. Ս. Աթոռոյն Երուսաղեմի	15
Կենսագրական գիծեր Ամեն. Տ. Նուրիան Արք. Մանուկեանի	18
Պաղեստինի Պետութիւնը կը հաստատէ նորընտիր Պատրիարքի ընտրութիւնը	19
Պաղեստինի Պետութեան հաստատագրին օրինակը	21
Յորդանանի Ապտալա Թագաւորը կը հաստատէ նորընտիր Պատրիարքի ընտրութիւնը	22
Յորդանանի Հաշիմական Թագաւորի հաստատագրին օրինակը	24
Իսրայէլի Պետութիւնը կը հաստատէ նորընտիր Պատրիարքի ընտրութիւնը	25
Իսրայէլի Պետութեան հաստատագրին օրինակը	26
Նորընտիր Պատրիարքի գահակալութեան հանդէս	28
Շնորհաւորական հեռագրեր նորընտիր Պատրիարքի գահակալութեան առթիւ	46
Ամեն. Տ. Նուրիան Արք. Մանուկեանի գահակալութեան առթիւ – Նահապետ Մելքոնեան	47
Կարգապահութիւնը անհրաժեշտ է – Միոն 1931- Տ.Վ.	49
Ամեն. Պատրիարք Սրբ. Հօր անդրանիկ մուտքը Բեթղեհեմի Ս. Մննդեան Տաճար	50
Ամեն. Պատրիարք Սրբ. Հօր անդրանիկ մուտքը Ս. Յարութեան Տաճար	52
Քէնթըրպըրիի նորընտիր Արքեպիսկոպոսի այցելութիւնը Հայոց Պատրիարքարան	54
Ամեն. Պատրիարք Սրբ. Հօր առաջին պաշտօնական այցելութիւնը Յորդանան	56
Ամեն. Տ. Նուրիան Պատրիարքի անդրանիկ այցելութիւնը Յորդանան- Ներսէս Ներսէսեան	58